

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

2016

Եղեգնյա գրդջով երգեցի փառքեր.
- Քեզի ընծա՛, իմ հայրենիք -
Սոսյաց անտառեն էի զայն կըտրեր...
- Քեզի ընծա՛, հին հայրենիք -
Եղեգնյա գրդջով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լու՛յս ելաներ:

Եղեգնյա գործով երգեցի կարոտ.
 - Ձեզի ընծա՛, հայ պանդուխտներ -
 Ան տարաշխարհիկ բույսի մ'եր ծրլոտ
 - Ձեզի ընծա՛, հեզ պանդուխտներ -
 Եղեգնյա գործով երգեցի հարսեր.
 Ընդ եղեգան փող ո՛րդ ելաներ:

Եղեգնյա գրքով երգեցի արյուն.
- Ձեզի ընծա՛, սուրի գոհեր -
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կընյուն...
- Ձեզի ընծա՛, կրակի գոհեր -
Եղեգնյա գրքով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող ս'ոտս ելաներ:

Եղեգնյա գըրջով որք տունս երգեցի.
- Քեզի ընծա՛, հայր ալեհեր -
Ցամաքած աղբյուրներ մեր զայն հոտեցի...
- Քեզի ընծա՛, մայր կարեվեր -
Եղեգնյա գըրջով օջախս երգեցի.
Ընդ եղեգան փող ծուխ ելաներ:

Ու պայքար, պայքար, պայքար երգեցի.
- Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ -
Գրիչս եղավ անթրոց սրտտերու հնոցի...
- Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ -
Եղեգմյա գըրչով վըրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող ըո՛գ ելաներ:

**ԹՈՂ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԸ ՄԵՉ ՉՈՐԱՅՆԻ. ԱՅՂ ՃԱՆԱԴԱՐՀՈՎ՝
ՏԻՐՈՉ ՉՈՐԱԿՅՈՒԹՅԱՄԲ, ՄԵՆՔ ԿՎԵՐԱԴԱՐՁՆԵՆՔ
ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ԱՐՅԱԽ ԱՇԽԱՐՀԸ**

**Գերշ. Տ. Վրթանես եպս. Ար-
րահամյանի պատգամը երու-
սաղեմի պատրիարքության
մայրավանք Սուրբ Հակոբում**

Սիրելի՛ հավատավոր գա-
վակներ,

Այսօր մեր սրտերում ու հոգիներում հնչում է մեր Տիրոջ հրաշափառ Հարության ավետիսը: «Քրիստոս յարեալ ի մեռելոց»: Քրիստոսի Հարությանը, իրապի, քրիստոնեությունիս համար կարևորագույն իրականությունն է, որը տերունապարզև Կյանքի ու մահվան խանդեպ վեի հաղթանակի խորհուրդըն է հաստատունն մեղ կյանքերիոց մեղս:

Աշխարհում տիրող անարդարությունը, անտարբերությունը, հանրապի հալածանքները երբեմն հուսահատեցնող տրամադրություններ են ստեղծում կյանքում: Սակայն մենք, որ Քրիստոսի հետևորդներն ենք, ունենք Հարության՝ հույս շնորհող լույսը մեր մեջ: Եվ այդ լույսը անմար կերպով ցույց է տալիս, որ, ի վերջո, ինչպես մեր Տիրուզ գեղեցմանն էր թափուր, այնպես էլ մեզ հողի մեջ թաղե-

փորձող հանգամանքներն են ապարդյուն դառնալու, եթե մենք հաստատուն ու հավատարիմ մնանք մեր հավատքին ու արժեքներին: Քրիստոս մեր ժողովրդին այսօր հարց է ուղղում. «Ես իսկ եմ հարություն ել կյանք. ու՞ր հավատում է իմ, թե՛ պէտ է մեռնի, կապրի. և ո՞վ կենդանի է ու իմ հավատում է, հաւիտյան չի մեռնի: Չավատո՞ւմ ես այս բանին» (Յովհ. 11:25-26): Եթե հավատում ենք Քրիստոսի հարությանը, ապա հավատում ենք նաև, որ Քրիստոսը կաթոսահարելի են բոլոր

դժվարությունները, և որ մեր Տերը, Ով Արդարադատ է, անպատասխան չի թողնի Իրեն հավատացողների ու Իր խոսքը կատարողների խնդրանքները: Սիրելիներ, թող Հայրության հավատը մեզ գործացնի՝ ամրացնելով մեր հավատարմությունը արժեքներին, ինչպես նաև մեր սերը և հոգատարությունը միմյանց հանդեպ: Միայն այդպես կկարողանանք իրականություն հարձակվելու մոլորության և մեղքի մեջ ընկնելու:



Նելու բերկրանքից: Թող Աստված օր առաջ ազատության շնորհին արժանացնի նրանց, որ մեր հավաքական ցավի մարմնավորումն են դարձել իրենց անձերով: Ամրացե՛ք ոգով և հավատացե՛ք, որ Հաղթության հավատով զինված ժողովրդի դեմ մահվան խայթոցն իսկ անգոր է:

Քրիստոս յարեալ ի մեռելոց
Օրհնեալ է յարութիւնը
Քրիստոսի

Մեզ եւ ձեզ մեծ օւրախիւ:

aravot.am

ԹԵԿՈՒՋ ՆԱՀԱՏԱԿ, ԲԱՅՑ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ

Հայաստանի ազգային հերոս Թաթուլ
Կրպեյանը գիտեր՝ տուն կգա որպես
Անմահ հերոս, բայց գիտեր նաեւ՝ հազարա-
վոր հայրենակիցների ու հայրենի երկրի
անվտանգությունը զոհեր է պահանջում:

Արցախն Ադրբեջանից ազատագրելու, արցախցիների անվտանգությունն ապահովելու նպատակով սկսվեց Ղարաբաղյան շարժումը, որին մասնակից եղավ ողջ հայությունը: Հուտով զգացրի՞ք՝ միայն զենքով է լինելու մեր երագահը՞: Արցախը միավորել Մայր հայրենիքին: «ՄԻԱՏՈՒՄ»-ը դարձել էր Երեւանում ու Ստեփանակերտում, այլ հայոց բնակավայրերում տեղի ունեցող խաղաղ ցույցերի ժամանակ ամենաշատ հնչող կանչը: Եկավ նաեւ պատերազմելու ժամանակ, եւ 1988-ի կեսերից սկսած՝ կազմավորվեցին ռազմական կամավորական ջոկատներ, որոնք անցան Արցախ ու ՀիւՍՀ սահմանամերձ բնակավայրեր: Արցախյան շարժման կիզակետում էին Երեւանի պետական համալսարանի ուսանողու-թյունը, դասախոսներ: Եվ նույն համալսարանի շատ ուսանողներ դարձան առաջին կամավորական ջոկատների անդամներ, ոմանք՝ հրամանատարներ՝ գիտակցելով, որ անհիմաա եւ խաղաղ ցույցերը, մամակները դեպի Կոնք: Արցախյան գոյամարտում մարտիրոսվեցին համալսարանականներ Վարդանները, Թաթուլը, Տիգրանը, էլի հերոսներ: Գետաշենի արծիվն ապրիլի 21-ին կղաւնած 60 տարեկան, սակայն հերոսն արդեն 34 տարի է, ինչ մեզ հետ է իր երկմա-լին կյանքով, իր հզոր հոգով, իր անմնա-

ցորդ հերոսությամբ, իր՝
որպես ազգի նվիրյալ հե-
րոսի կերպար էությամբ:

Արցախյան շարժման հենց սկզբում աչքի ընկավ Թաթուլը՝ նստացույցի ժամանակ: Ուսանողական տարիներին «Մարաթուլ» ազգագրական երգի պարի համույթում էր, հավաքագրել ու մոռացությունից փրկել է ժողովրդական եւ ազգային-ազատագրական պայքարի մասին երգեր ու պարեր: Երեսնամի պետական համալսարանում հիմնադրել է «Կարս» ազգագրական երգի-պարի համույթը: Հիշում եմ այդ համույթի համերգները, որի ժամանակ իր կատարմամբ հանդես եկավ նաեւ ազգի ապագա հերոսը:

Թաթուլ Ժորժիկի Կրպեյանը ծնվել է 1965 թ. ապրիլի 21-ին ՀԽՍՀ Թալինի շրջանի Արեգ գյուղում: 1972-1982թթ. սովորել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում: Այն ավարտելուց հետո ծառայել է խորհրդային բանակում: 1985-1986թթ. սովորել եւ գերազանցությամբ ավարտել է Թալինի թիվ 76 պրոֆտեխնիկոսականը: 1987-ին ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ: Չորրորդ կուրսում միացել է հայկական ազատագրական շարժմանը: 1987-1989թթ.



«Միացում» կազմակերպության անդամ էր: 1989թ. Թաթուլն ամուսնացավ Իրինա Բարսեղյանի հետ: 1990թ. փետրվարի 20-ին ծնվել է իրանց դուստրը՝ Սասյան Կրպեյանը: Ընտանիքը բնակվել է Նոր Նորքի 2-րդ զանգվածի՝ ասպիրանտների համար նախատեսված 18 հարկանի շենքում: 1990թ. ընդունվել է ՀՀԿ կուսակցության շաբաթը: Եկավ Արցախ անցնելու ժամանակը, եւ Թաթուլն իր ջոկատով 1990թ. սեպտեմբերին արդեն Գետաշեն-Մարտունաշեն ենթամարտիկ հեմիսպարային խմբի անդամ էր:

պանության ընդհանուր հրամանատարն էր՝ ընդդեմ արդեշտանական զինված ուժերի, խորհրդային բանակի եւ ոստիկանական խմբավորումների: Ազատ ժամերին հայոց պատմություն եւ աշխարհագրություն էր դասավանդում դպրոցում: Այդ ընթացքում նման ջոկատներ էին անցել Արցախի վտանգված վայրեր՝ Բերդաձոր, Յաղութի շրջան, Շահումյանի շրջան եւ այլուր: Ամենուրեք պատերազմ էր արդեն, իհարկե, ոչ լայնածավալ:

Խորհրդային իշխանություններն ու Ադրբեջանի ղեկավարությունը գիտակցում էին՝ Արցախը միավորվելու է Մայր հայրենիքին, եւ որոշեցին ժամ առաջ թույլ չտալ դա: Ղե-

նետ 1990 թ. ամռան եւ աշնան ընթացքում բազում անգամ փորձեցին ծնկի բերել հայությանը հատկապես այն վայրերում, որոնք չորս կողմից շրջափակված էին թուրքական բնակավայրերով։ Բերդաձորում եւ ներկա եղել մնա՞ն դեպքերի, ինչպես էին թուրքերը խորհրդային զինվորականների՝ իրենց թիկունք ու պահապան դարձրած՝ մտնում հայկական գյուղեր, իրականացնում խուզարկություններ, ձերբակալություններ, գողանում անասուններ՝ սպանելով անասնապահներին։ 1990թ. նոյեմբերին վառեցին Բերդաձորի Տասի վրեստ-Ճաղկածոր գյուղի տները, Լաչինի շրջանից հարձակվեցին Բերդաձորի Զին շեն եւ Մեծ շեն գյուղերի վրա։ Պաշտպանեցին՝ գյուղերը երկու զուգորդ գնով։ 1991-ի հունվարի 17-ին նույն Բերդաձորում խորհրդային զինվորականները գնդակոծեցին Եղջահողից Մեծ շեն գնացող մեր ազատամարտիկների մեքենան։ Սպանվեց Ստեփանը, վիրավորվեցին 3 տղաներ։ Իսկ Գետաշենի անկումից հետո նույն ուժերը հայաթափ արեցին Բերդաձորն ու Զաղորուքի շրջանի մի քանի գյուղ, գերեզմարեցին բազում հայորդիներին։ Բաքվի բանտերում տառջամահ արվեցին Բերդաձորի ենթաշրջանի պաշտպանության հրամանատար Աննո Սկրտչյանը, որը նույնպես ապրիլին է ծնվել՝ 25-ին եւ ազատամարտիկ Զրաչ Պետրոսյանը։ Նման դեպքերն ամենուր էին Արցախում, նաեւ՝ Զախատանի սահմանամերձ տարածքներում՝ Շուռնուխ, Ոսկեպար եւ այլն։ Սակայն անընկճելի էինք։

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅԱՅՄԱՆ ԱՌԱՔՅԱԼԸ



*Բառին խորագոյն եւ ընդգրկուն իմաստով՝
Հայաստանի եւ հայութեան արդի
ժամանակներ մուտքին եւ
ազգային ինքնահաստատումին
Առաքելը եղաւ Նիկոլ Աղբալեան:
Անսակարկ եւ անճնուէր
ծառայութեան լծուեցաւ հոն,
ու հայ ժողովուրդը կարիքը ուներ
իր տաղանդին, իմաստութեան եւ
մղիչ ուժին:
Ն. Պէրպէրեան*

Բարի ավանդույթ է դարձել Հովհաննէս Թումանյանի թանգարանի և հումանիտար քոլեջի սաների՝ հաճախակի դարձած հանդիպումը Հրամոտ Մաթևոսյան մշակութային կենտրոնում, որտեղ Հովհաննէս Թումանյանի թանգարանի ժամանակավոր ցուցադրությունն է:

Ողջունելով հումանիտար քոլեջի սաներին ու մանկավարժներին՝ թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանն ասաց, որ այսօրվա «Ժամադրությունը» հայոց երեք մեծերի հետ է՝ Հովհաննէս Թումանյան, Նիկոլ Աղբալյան, Եղիշե Չարենց: Այդ «Ժամադրությունը» նվիրված է գրականագետ, ինչպես ինքն էր սիրում ասել՝ մանկավարժ, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ և «Վերնատան» անդամ Նիկոլ Աղբալյանին: Միջոցառումը նվիրված է նրա ծննդյան 150-ամյակին:

Ծնվել է 1875թ. մարտի 24-ին Թիֆլիսում: 1892թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը և ընդունվել Եմիածնի Գևորգյան ճեմարան, որտեղ սովորել է երկու տարի: Այնուհետև կարճ ժամանակով եղել է Մոսկվայի, Լոգանի, Սորբոնի համալսարանների ունկնդիր, սակայն չի ավարտել ազգային-քաղաքական գործունեությանը նվիրվելու պատճառով: Զբաղվել է քաղաքական, գրական-մշակութային գործունեությամբ և ուսուցչությամբ: Նրա ուսուցչությունը հետաքրքիր աշխարհագրություն է ունեցել՝ Կաղզվան, Ագուլիս, Շուշի, Թեհրան, Ալեքսանդրիա, Բեյրութ: Գրական գործունեությունը սկսել է «Մուրճ» ամսագրում, որտեղ 1896-1899թթ. ընթացքում տպագրել է երեք տասնյակից ավելի գրախոսական հոդված, գրականագիտական ուսումնասիրություն:

Արդեն 1900-1910թթ. նա ճանաչված քննադատ էր, քաղաքական գործիչ, Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահի (Հովհաննէս Թումանյան) անփոփոխ տեղակալը: Մեծ է նրա դերը հատկապես Սայաթ-Նովայի հոբելյանական հանդիսությունների կազմակերպման գործում:

Աղբալյանը Առաջին համառապետության օրերին երևանում ստեղծեց Հայաստանի գրողների ընկերությունը: Նա ճանաչված հրապա-

րակախոս էր, փայլուն հռետոր: Անդրադարձել է 20-րդ դարի առաջին կեսի հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր խնդիրներին: Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարի պաշտոնում (1919թ. օգոստոս-1920թ. մայիս) մեծ աշխատանք է ծավալել մշակույթի, գիտության և ազգային կրթության նկատմամբ պետական մոտեցում ձևավորելու ուղղությամբ: Աշխատակցել է «Մուրճ», «Վտակ», «Զանգակ», «Գործ», «Հորիզոն», «Նոր հոսանք», «Արև», «Ազատամարտ», «Ռազմիկ», «Հառաջ», «Վեմ», «Սիոն», «Հայրենիք», «Ազդակ» և այլ պարբերականների, մեկ տարի եղել է «Ազատամարտիկ»-ի խմբագիր, «Հորիզոն»-ի և «Նոր հոսանք»-ի խմբագիրներից մեկը: Սփյուռքում հրատարակվել են գրականության և լեզվի խնդիրներին նվիրված նրա աշխատությունները, որոնք լուրջ ավանդ են հայ գրականության պատմության, հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառներում:

Այնուհետև հումանիտար քոլեջի սաները վայելեցին միջոցառման բանախոս, ք.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի վայելուչ հայերենով խոսքը, որով ըստ ամենայնի բնութագրվեց Նիկոլ Աղբալյանի մեծությունը:

Կարևորելով վերջինիս գործունեությունը հայ իրականության մեջ՝ Դավիթ Գասպարյանը անդրադարձ կատարեց նրա կյանքի կարևոր դրվագներին:

Անկախ Հայաստանի հռչակումից հետո Նիկոլ Աղբալյանի ամենամեծ հոգսը դառնում է կրթական ողջ համակարգին, մշակութային կյանքին զուտ ազգային շունչ, դեմք ու դիմագիծ հաղորդելը: Երկար ու ծիգ 100-ամյակներից հետո հայրենական հողի վրա պետք է բացվեին կամ վերածնունդ ապրեին տարրական ու միջնակարգ կրթօջախներ, երաժշտական ու թատերական խմբեր, մատենադարան, ազգային ու ազգագրական թանգարաններ, հանրային գրադարաններ և այլ հաստատություններ: Նախարար Աղբալյանի կյանքում ամենափառաբան իրադարձությունը եղավ 1920թ. հունվարի 31-ին, երբ հանդիսավոր պայմաններում բացվեց Հայաստանի համալսարանը: Միջնադարում բարձր կրթօջախներ հիմնած հայ ժողովուրդը 20-րդ դարում պիտի ունենար իր համալսարանը և ունեցավ:

Ծնված լինելով Թիֆլիսում՝ թիֆլիսյան հայկական միջավայրի արդյունք էր Աղբալյանի ամբողջ իմացությունն ու վաստակը: Ավարտել է մի շարք կրթօջախներ, որոնք շատ կարևոր էին հայագիտության համար: Օրինակ՝ Ներսիսյան դպրոցը, որը համալսարանի արժեք ուներ, Գևորգյան ճեմարանը, որն այսօր էլ համալսարանի արժեք ունի: Իր գործունեությունը սկսեց որպես քաղաքական գործիչ, բայց կյանքում միշտ մնաց գրականության մարդ: Նա մեր լավագույն գրական քննադատն էր, որ խորը կերպով ներկայացրել է հայ գրական դեմքերին: Նրա կողքին էր նաև Լևոն Շանթը: Շանթի միայն «Հին աստված-

ներ» դրամայի վերաբերյալ գրեց հինգ հոդված՝ յուրաքանչյուրի մեջ առանց կրկնելու նախորդից մի տող անգամ, որովհետև ամեն անգամ նորովի էր բացահայտում դրաման:

Հուրախություն ընթերցասերների՝ Դավիթ Գասպարյանը նշեց, որ նախատեսված է Աղբալյանի գործերի իննհատորյակի հրատարակությունը, որը շուտով իրողություն կդառնա: Բանախոսը անդրադարձավ նաև քննադատի քառահատորյակին, որի առաջին հատորում պիտի զետեղված լինեին Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուին նվիրված նրա հոդվածը, սակայն այն բացակայում էր: Հետագայում պարզվեց, որ այդ հոդվածը տպագրվել է դաշնակցական «Զանգ» թերթում (1908թ.) Տերյանի 72 բանաստեղծությունների վերա-



բերյալ: Աղբալյանը գրախոսել է այդ ժողովածուն և, ո՛վ գարմանք, քննադատել Տերյանի լեզուն, որ մենք արքայական ենք համարում: 1912թ. Տերյանը հրատարակեց ևս մեկ գիրք՝ «Բանաստեղծություններ» վերնագրով (հատոր 1), որի մեջ զետեղել էր «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն՝ ոչ թե 72, այլ 76 բանաստեղծության ընդգրկմամբ: Զարմանալին այն էր, որ փոփոխված էր Տերյանի լեզուն, ավելի հղկված ու զերծ 19-րդ դարում ընդունված *սորա, դորա, մորա* ... ձևերից: Փաստորեն Աղբալյանը ճիշտ էր: Առանց վիրավորանքի՝ արքայական լեզվի հեղինակը ընդունել էր մեծ քննադատի դիտողությունները: Վահան Տերյան և Նիկոլ Աղբալյան՝ երկու հզոր անհատականություններ, գրական խոշոր դեմքեր. նրանցից մեկը դիտողություն արեց, մյուսն էլ մեծահոգաբար լսեց ու ավելի կատարելագործեց իր լեզուն: Նման մարդկային հարաբերությունները հատուկ են միայն մեծերին, որ իմաստության մեջ առաջնորդվում:

Այսպիսին էր գրաքննադատ Նիկոլ Աղբալյանը. նրա աչքն ամեն ինչ տեսնում էր, և գրականությանը տիրոջ պես էր նայում ու լավագույնն էր ուզում տարածել:

Նա գրախոսել է նաև Արմեն Տիգրանյանի քրոջ՝ Արմենուհի Տիգրանյանի բանաստեղծությունների ժողովածուն: Արմենուհի Տիգրանյանը կարևոր դեր է խաղացել Եղիշե Չարենցի կյանքում: Քննադատը հետաքրքրված էր ողջ հայ գրական կյանքով, դա կլինի Հայաստանում, թե Հայաստանից դուրս (օրինակ՝ գրախոսել է Դանիել Վարուժանի Կ.Պոլսում տպագրած «Նավասարդ» տարեգիրքը): Կ.Պոլսում տեղի էր ունեցել վեց գրական ասուլիս՝ նվիրված առանձին գրողների, որոնք կրկին գրախոսել է Աղբալյանը: Այսինքն՝ նա անտարբեր չէր ոչ միայն արևելահայ, այլև արևմտա-

հայ գրական կյանքի հանդեպ:

Երբ Աղբալյանը դարձավ Հայաստանի գրականության և արվեստի նախարար, հանդիպեց Հովհ. Թումանյանին, որի հետ շատ մտերիմ էր, և քննարկեցին հրատապ շատ հարցեր: Երկուսն էլ նվիրված էին Սայաթ-Նովային: Որոշ երգեր կան, որ Սայաթ-Նովայից մեզ են փոխանցվել Նիկոլ Աղբալյանի կատարմամբ: Նա շատ լավ երգում էր, ու նրա երգով են այդ մեղեդիները փրկվել ու փոխանցվել սերնդեսերունդ: Սիմոն Վրացյանի հուշերում պահպանված մի միջադեպի մասին՝ կապված Վահան Տերյանի հետ, բանախոսը պատմեց հետևյալը:

1919 թվականին Տերյանը Մոսկվայից գալիս է Թիֆլիս, հանդիպում Հովհ.Թումանյանին և ասում, որ իրեն ծառայության են կանչել, և որ

ինքը չի ուզում «էշ նահատակ» դառնալ: Թումանյանը մի գրություն է տալիս Տերյանին և ուղարկում Երևան՝ Ն. Աղբալյանի մոտ, որ հարցերը լուծի: Տերյանը գալիս է Երևան, հանդիպում Աղբալյանին ու Սիմոն Վրացյանին: Երեկոյի ժամանակ Աղբալյանը երգեց, Տերյանը արտասանեց մի նոր բանաստեղծություն,

ինտոն Թումանյանի գրությունը հանձնեց Աղբալյանին, և պայմանավորվեցին հաջորդ օրը հանդիպել ու հարցերը լուծել: Հաջորդ օրը, սակայն, Տերյանը չկար: Պարզվեց, որ նա մեկնել է Թիֆլիս, այնտեղից էլ՝ Մոսկվա:

Աղբալյանի ամենատես աչքը շատ վաղ նկատեց նաև պատանի Չարենցին, երբ կարդաց նրա «Երեք երգ տխրադալուկ աղջկան» բանաստեղծությունները: Շատ զարմացավ, թե տասնվեց տարեկան տղան ո՞նց կարող էր մի ամբողջ կյանք ապրած մարդու մտքեր արտահայտել: Հետագայում ևս կարողավ նրա մյուս գործերը՝ ապշում է նրա մտքի խորությունից և հայտարարում՝ ծնվել է մի նոր բանաստեղծ՝ Եղիշե Չարենց անունով: Որոշում է անպայման մի երեկույթ կազմակերպել ու մեծարել նրան: Այդ հարցը քննարկում է Թումանյանի հետ ու ստանում նրա աջակցությունը: Կազմակերպում է այդ երեկույթը, որին ներկա է լինում նաև Վահան Թեքեյանը: Այս ամենից անտեղյակ էր Չարենցը, բացակայում էին նրա գրքերը, որովհետև քիչ էր տպագրվել: Այդ ժամանակ Չարենցը ուսուցչություն էր անում Արևմտյան Հայաստանի հեռավոր մի գյուղում: Նա ավելի ուշ է իմանում Աղբալյանի այս նախաձեռնությունների մասին: Աղբալյանը նրան բերել է տալիս իր մոտ՝ նախարարություն: Մեծ քննադատը չէր սխալվել, Չարենցը, իրոք, հրաբխոջ բանաստեղծ էր: Չնայած վերջինս որոշ ժամանակ տուրք տվեց անցյալի ժառանգության ժխտման գործին («Երեք»-ի դեկլարացիան), բայց կարճ ժամանակ անց ուղղեց իր սխալը:

1923թ. նամակ գրեց Մոսկվայում բուժվող Հովհ.Թումանյանին՝ մեծաբանքով գնահատելով նրա վաստակը.

«...Չեմ ավանդույթներից պիտի բխի մեր վաղվա երգը: Դուք մեր երգի, գրի մահապետն եք...»: Թուման-

յանը շատ է հուզվում այդ նամակից: Չարենցը նույնն անում է նաև Տերյանի հանդեպ:

Նիկոլ Աղբալյանը, որ սկզբից տարված էր Չարենցով, շատ խիստ վարվեց նրա գրական սայթաքումների հանդեպ, բայց երբ 1930թ. լույս տեսավ Չարենցի «Էպիգրամական լուսաբաց» ժողովածուն, նրա մեջ գտավ մի բանաստեղծություն «Սիրելի Ա-ին», հասկացավ, որ այդ տողերն իրեն են ուղղված:

*Ես չեմ մոռացել քեզ, բարեկամ,
ես հիշում եմ քեզ կրկին, կրկին,
Ինչպես անցորդը թափառական
Հիշում է միշտ անցած ուղին:-
Սիրով է հիշում նա ուղին հին
Գուցե թախիծով, սակայն երբեք
Նա չի ցանկանա կրկին, կրկին
Թողնել հեռուները ու դառնալ
ետ...*

*Երբ անցած ուղին հուշով անշեջ
խոցում է ինչպես կարոտի նետ,-
խեղդում է նա այդ կարոտն իր
մեջ,*

Որ երբեք երբեք չդառնա ետ...

Վերջում թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը քոլեջի սաներին ներկայացրեց Աղբալյանի՝ Թումանյանին հղած շատ արժեքավոր նամակից մի հատված. «...Իսկ շա՞տ բանի կարելի է հասնել մեր հասարակության մեջ, որտեղ զարթուն հոգի չկա, և զարթուններն էլ մնջում են հոգնած, մենակ պահապան մնալուց: Մենակությունը համարձակ է դարձնում մարդուն, բայց և շատ է սպառում ուժերը: Աշխարհը խորապես հասկանալու համար նույնպես ընկերություն, հասարակություն է հարկավոր, ինչպես և առհասարակ՝ քաղաքակրթության առաջ գալու համար այդ անհրաժեշտ պայման էր: Ասելս այն է, որ ազգային գրականություն ասած բանը շատ քչերն են հասկանում կամ թե իսկի չեն հասկանում, թեև ամենքն էլ ավել կամ պակաս լսել են նրա մասին, իմացել են, կարդացել են, սովորել են: Այդ բանը խորապես հասկանալու համար մարդ պետք է մի կողմից ամուր կպած լինի իր ազգի բունին, մյուս կողմից սրտով ապրած լինի օտար ուղրտներում, օտար գրականություններում. ո՛չ մեկը չունի այն հոտը, ինչ որ ազգայինը, ո՛չ մեկը այն համը, այն ընտանեությունը, այն հարազատությունը չունի: Եվ ինչպես ձուկը ջրից դուրս մահվան ձեռքին գալարվում է, և կենդանին ածխաթթվուտի մեջ սատկում, այնպես է համարյա սեփական գրականություն չունեցողի հալը: Ինչպես մարմնավոր գոյության համար Հայրենիք է հարկավոր, այնպես էլ մարդու հոգու համար հարկավոր է մի հատուկ, նրան հարմար հոգեկան մթնոլորտ, օդ, որ շնչասպառ չլինի... Ոչ ոք չի մտածում, որ հայը պիտի հայ մնա և ցույց տա իրեն աշխարհին ոչ իբրև եվրոպացի, այլ իբրև հայ, նա պիտի իր ազգին սնուցանի Նարեկացիով և միջնադարյան երգերով ու կլանելով այն, ինչ տվել է ամբողջ մարդկությունը՝ ճշմարտություն, գեղեցկություն և բարին աշխարհում, ասի աշխարհին, թե ինչպես է ինքը հասկանում այդ երրորդությունը...» (1908թ. մարտի 1, Պետերբուրգ):

Սովորելու ու որպես հայ ապրելու համար մենք դեռ շատ բան ունենք անելու:

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՇԵՐՈՍՆԵՐ

ՏՈՒՆԸ ԴԱՐՁԱՎ ԹԱՆԳԱՐԱՆ

«Մենք եղել ենք զաղուքային ժողովուրդ, և մեր հայրենաբաղձությունն արտահայտվել է ազգային սիմվոլներին խոնարհվելով: Երբ արդեն պետականություն է հաստատվել, ճերմակ այդ երազանքը ներարկվել է մեր կենցաղ, մեր գորշ իրականություն: Երազը երազ է: Պարզվում է, որ պետականությունը՝ դա այդքան է, ստրկամիտ ու կաշառակեր ժողովուրդ, պատասխանատվություն, ծանր աշխատանք, անբավարարվածություն, նաև ազատության ծգտում: Այսօր մենք առաջընթացի ազատություն ունենք, բայց այդ ազատությունն օգտագործելու տրամաբանությունը չունենք: Եթե ժամանակին ազատությունը մեր հեքիաթների մեջ էր արտահայտվում, ապա այսօր եկեք երազենք գիշերը, իսկ ցերեկը՝ աշխատենք»:

Աշոտ Նավասարդյանի մտքերից

Արտի 28-ին հայ ազգային ու պետական քաղաքական գործիչ Աշոտ Նավասարդյանը կղաճնար 75 տարեկան, սակայն նա մահկանացուն կնքեց 47 տարեկան հասակում 1997թ. նոյեմբերի 3-ին: Հայ ժողովրդի ապագան միացյալ ու անկախ հայրենիքում բնակվելն Ա. Նավասարդյանի երազանքն էր և որի համար պայքարում էր ու կյանքի 17 տարիներն անցկացրեց խորհրդային բանտերում, աքսորում: Ընդամենը 18 տարեկան ան-



դամագրվել է Ազգային միացյալ կուսակցությանը (ԱՄԿ), իսկ 1973-ին՝ նույն կուսակցության խորհրդի անդամ: Նժդեհի «Ցեղակրոն» գաղափարախոսության հետևորդը, 1987-ին ազատվելով բանտից և լինելով «Ազգային ինքնորոշում միավորում» կազմակերպության խորհրդի անդամ, 1989թ. կուսակիցների հետ հիմնադրել ու ղեկավարել է «Անկախության բանակ» ռազմաքաղաքական կազմակերպությունը, որը մասնակցել է Հայաստանի պաշտպանության և Արցախի ազատագրման մարտերին՝ Երասխավանից մինչև Մարտակերտ, Քարվաճառ, Լաչին, Շուշի և այլ վայրեր: 1990թ. Ա. Նավասարդյանը հիմնել է Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀԿԿ), որը ղեկավարել է մինչև կյանքի վերջը: Պարգևատրվել է 1-ին աստիճանի «Մարտական խաչ»-ով: 1990թ. ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, իսկ 1995-ին ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: 1991-1995թթ. եղել է ՀՀ ԳԽ անկախ պետականության հաստատման և ազգային քաղաքականության հարցերի և Սահմանադրական հանձնաժողովների անդամ, 1995-1997-ին՝ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ: 1996թ. Գերմանիայում մասնակցել է Ռազմավարական հետազոտությունների Մարշալի կենտրոնի դասընթացներին, ստացել է ռազմագետի որակավորում: Նրա ամուսնով է 2005 թվականից կոչվում Դավթաշենում գործող թիվ 196 հիմնական դպրոցը, որի տնօրենը ավագ դուստրն է՝ Անուշ Նավասարդյանը: 2002-ից Աշոտ Նավասարդյանի ամուսնով էր կոչվում նաև Քաշաթաղի շրջանի Ծաղկաբերդ գյուղի դպրոցը, որը բացվել էր 1994-ին և շրջանում հիմնադրված առաջին կրթօջախներից էր ու մնաց գերության մեջ 2020-ի պատերազմի հետևանքով:

Երևանյան տունը, որտեղ ծնվել է Ա. Նավասարդյանը, կնոջ՝ Հասմիկի և երեք

դուստրերի ջանքերով դարձավ թանգարան:

Բացումը տեղի ունեցավ քաղաքական գործչի ծննդյան օրը: Արարողությանը ներկա էին ՀՀԿ նախագահ, ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը, կուսակիցներ, Ա. Նավասարդյանի հարազատներ, բարեկամներ, մտերիմներ, հետևորդներ, թիվ 196 հիմնական դպրոցի ուսուցիչներ, աշակերտներ, այլք: Մինչ բացման արարողությունը, եղավ այցելություն Եռա-



բլուր, որտեղ է հուղարկավորված Ա. Նավասարդյանը: Նրա զինակից ու կուսակից ընկերները, անվան դպրոցի ուսուցիչները, պատկերներ ու ծաղիկներ խոնարհեցին չիրմաբարին, եղավ խնկարկում: Տուն-թանգարանի բացման արարողության ժամանակ զինվորական համազգեստով պատվո պահակ էին կանգնել դպրոցականները: Ցուցատախտակի բացումից հետո ներկաները մտան նորաբաց տուն-թանգարանի բակ, որտեղ եղավ փոքրիկ բեմական ներկայացում: Աշոտ Նավասարդյանի դերում հանդես եկող դերասանը ներկայացրեց նրա կյանքի դատական ու բանտային դրվագները: Ա. Նավասարդյանի կինը, խոսելով ամուսնու մասին, ասաց՝ երջանիկ է, որ Աշոտն է եղել իր կյանքի ընկերը: Իր խոսքում ասաց. «Շատերը երևի չգիտեք՝ ես ավելի շատ սպասել եմ Աշոտ Նավասարդյանին, քան միասին ենք եղել»: Հայ կանանց պատգամեց. «Հավատացե՛ք ձեր ամուսիններին, վստահե՛ք նրանց, որովհետև վերևում Աստված տեսնում է ազնիվը, բարոյականը, համեստությունը, հավատարմությունը»:


Թանգարանում ցուցադրված են Ա. Նավասարդյանի անձնական իրերը, փաստաթղթերը, լուսանկարներ և այլ նյութեր՝ կապված ազգային ու քաղաքական գործչի կյանքի հետ: Թանգարանում Ա. Նավասարդյանի ավագ դուստր Անուշ Նավասարդյանն ասաց, որ ընտանիքի երազանքն է եղել պապենական տունը դարձնել թանգարան, ու կատարվեց երազանքը: «Այս տունն ու բակը մեծ խորհուրդ ունեն. այստեղ ԱՄԿ-ի անդամներն են եղել, այստեղ բազմաթիվ զաղտնի հավաքներ են եղել՝ համուսն անկախության իրենց պայքարի ու գործողությունների մշակման, ապա՝ խուզարկություններ, ձերբակալություններ... Այս տանն Աշոտ Նավասարդյանի ընտանիքն է ձևավորվել, անկախության բանակն է ձևավորվել, Հայաստանի հանրապետական կուսակցությունն է ձևավորվել՝ նրա կանոնադրությունն ու ծրագիրն են գրվել...»: Կարևորեց նաև այն, որ այսուհետ իրենց տունը դառնալու է պետականության, ազգի, ժողովրդի խորհրդանիշ: «Ես այսօր իմ երազանքների տերն եմ դարձել», - ոգևորված ասաց Ա. Նավասարդյանի կինը՝ տիկին Հասմիկը: Հիշողություններ պատմեց ամուսնու, իրենց կայացած ընտանիքի մասին: Մի անգամ Աշոտ Նավասարդյանը, խոսելով իր ընտանիքի մասին, ասել է «Ես ունեմ ընտանիք. հրաշալի կին եմ երեք՝ ոչ արու զավակներ: Բայց իմացե՛ք՝ առյուծի ծագը՝ էգ, թե ործ, կորյուն է կոչվելու»: Պատմեց՝ ինչպես է սպասել ամուսնու նամակներին, նրա վերադարձին, բայց եղել է հպարտ՝ համուսն ազգի է ամուսինն աքսորում, բանտում:

Ընթացքում եղավ նաև համերգային մաս: Ա. Նավասարդյանի մասին հուշեր պատմեցին նաև կուսակից ու մարտական ընկերները:

ԹԵԿՈՒՋ ՆԱՀԱՏԱԿ, ԲԱՅՑ ՍԱՀՄԱՆԱԴԱՐ

1991թ. գարունը եղավ մեր «Մահ կամ ազատություն» փորձության հիմնական շրջանը: Խորհրդային իշխանություններն անցան բացարձակ հարձակման: Թուրք օմոնականների հետ իրականացրին «ԿՈԼՑՈՒ» («Օղակ») ռազմագործողությունը՝ որոշելով վերջնական լռեցնել Արցախյան շարժումը: Առաջինն սկսեցին Գետաշենից: Խորհրդային 4-րդ բանակի եւ ադրբեջանական ՕՄՕՆ-ի համատեղ ուժերը 1990թ. ապրիլի 30-ին՝ «Օղակ» ռազմական գործողության շրջանակներում հարձակվեցին Գետաշենի վրա: Այդ օրը, գերի վերցնելով 17 խորհրդային զինվորականի, մեկ ադրբեջանցի ուղեկցորդի եւ խորհրդային բանակի գնդապետ Մաշկովին, Թաթուլ Կրպեյանը նրանից վերցրեց խորհրդային բանակի եւ ադրբեջանական ՕՄՕՆ-ի համատեղ իրականացրած «Օղակ» ռազմական գործողության պայմանականչերով պլանը: Սակայն այդ օրը փոխհրամանատար Արթուր Կարապետյանի եւ Հրաչ Դանիելյանի (Ջարգանդ) հետ մարտիրոսվեց Գետաշենում՝ բանակցությունների ժամանակ: Տղաների զոհվելուց հետո խորհրդային 14 պատանդ զինվորական փոխանակվեցին ՕՄՕՆ-ականների կողմից պատանդ վերցված 27 հայ բնակիչների հետ: Այսպես մարտիրոսվեց Թաթուլը, ինչպես նրան նկարագրել են՝ Սասնո ֆիդային՝ թիկնեղ, զանգուր մազերով, թավ մորուքով: Ընկան այլ հերոսներ, գետաշենցիներ: Ապրիլի 30-ին Մարտունաշենում մարտիրոսվեց նաեւ Սիմոն Աշիգոյանը՝ Դեղը, որը 11 օր առաջ էր ստանձնել տեղի «Արաբը» ջոկատի հրամանատարությունը: Ընկավ նաեւ Մարտունաշենը: Թաթուլն ասել էր. «Ինչո՞ւ եք վախենում մահից: Հողի համար ես հենց հիմա պատրաստ եմ մեռնելու: Հողի, ազգի համար: Ես ոչ մի անգամ չեմ գնա Երեւանի օդանավակայանում իջնեմ, ասեմ՝ Գետաշենը հանձնեցի: Ես այստեղ կմեռնեմ, այդ բանը չեմ անի... Գետաշենը կդատարկվի միայն իմ դիակի վրայով»:

1996թ. սեպտեմբերի 20-ին Թաթուլը հետմահու արժանացավ ՀՀ բարձրագույն պարգևի՝ Ազգային հերոսի կոչման, պարգևատրվեց «Հայրենիք» շքանշանով: Հերոսի անունով են կոչվում հայրենի Արեգ գյուղի, Արցախի Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքի միջնակարգ, Երեւանի թիվ 62 ավագ դպրոցները, դասարաններ Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների, այդ թվում նաեւ Քաշաթաղի շրջանի մի շարք դպրոցներում: ԵՊՀ պատմության ֆակուլտետում անվանակոչվել է լսարան, սահմանվել Թաթուլ Կրպեյանի անվան կրթաթոշակ: «Քաջն Թաթուլ» ազգագրական երգի ու պարի համույթը գործում է Երեւանում, իսկ Կովսականում Կարեն Մարտիրոսյանի գլխավորությամբ «Թաթուլ» ազգագրական երգի պարի համույթում տարածքի դպրոցականներն էին և մասնակցում էին բազում միջոցառումների, հատկապես՝ կապված Հայոց բանակի հետ: Երեւանում՝ Նոր Նորքում, բացվել է զբոսայգի՝ նվիրված հերոսին: Երեւանի պետական համալսարանի ուսանողության եւ բերդորդի աշակերտների, ինչպես նաեւ՝ հերոսի դստեր՝ Ասպրամի մասնակցությամբ, Գուրգեն Մելիքյանի նախաձեռնությամբ Թաթուլ Կրպեյանին նվիրված պուրակ հիմնվեց նաեւ Քաշաթաղի շրջկենտրոն Բերդորում: Հերոսին հիշում եւ մեծարում են արտերկրի մեր հայրենակիցները: Արեգ գյուղում Կրպեյանի շիրիմի վրա կանգնեցված է տուֆակերտ հուշակոթող: 1993թ. լույս է տեսել Թ. Կրպեյանի բանաստեղծությունների «Թաթուլ» գրքույկը: Թաթուլ Կրպեյանին եւ ընկերներին են նվիրված Ռաֆայել Սահակյանի «Արժանապաշտ երկիր» փաստագրերով ստեղծված վեպն ու «Կարոտից խելառը» տեսաֆիլմը, ինչպես նաեւ Ներսիս Իսպիրյանի «Լեռան լանջին», Աշուղ Գեւորգի «Մայրամուտ իջավ» երգերը, Աշոտ Բաբայանի «Սոնատ քվարտետակի եւ դաշնամուրի համար» ստեղծագործությունը (1993 թվական) եւ այլն: Թողարկվել է հերոսի 50 - ամյակին



նվիրված նամակահիշով բացիկ: 2016թ. հրատարակվել է հերոսի կնոջ՝ լրագրող, պատմական գիտությունների թեկնածու Իրինա Բարսեղյան-Կրպեյանի հեղինակած «Թաթուլ Կրպեյան. Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանությունը» մենագրությունը:


2020թ. գրուցել են Իրինա Բարսեղյան-Կրպեյանի հետ: Տեղեկացրեց. «Գրքի

անգլերենը տպագրվել է 2019թ. նոյեմբերին: Մենագրությունը լույս տեսավ 2016թ. Երեւանում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Մեսրոպ արքեպիսկոպոս Աշենան» մատենաշարով: Նույն թվականին գիրքը կրկին վերահրատարակեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը: Թեմայի այժմեականությունը եւ հետաքրքրության աստիճանը նկատի ունենալով եւ հաշվի առնելով բազմաթիվ ընթերցողների ցանկությունը, դատեմք՝ Ասպրամ Կրպեյանի առաջարկով, 2018թ. սկսեցի գրքի հայերենից անգլերեն թարգմանության աշխատանքները: Թարգմանությունը («The Self—defense of the Getashen sub—district in Northern Artsakh») լույս տեսավ 2019թ. նոյեմբերին Երեւանում՝ «ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչությունում: Գիրքը ներկայացվել է մի շարք երկրներում՝ Կանադա, Նիդերլանդներ, Ֆրանսիա, Շվեյցարիա, Մեծ Բրիտանիա:

Իսկ Կովսականում՝ հերոսի ծննդյան եւ մարտիրոսության օրերին մշտապես ցերեկույթ-հանդեսներ էին կազմակերպվում: Հաճախ մասնակից էին լինում հերոսի ընտանիքը, մարտական ընկերներ, ճանաչված երգիչ-երաժիշտներ, ՀՀԿ անդամներ, շրջանի ղեկավարությունը: 2011թ. նոյեմբերի 1-ին՝ քաղաքի ազատագրման 18-ամյակի առթիվ, հերոսի կնոջ եւ դստեր ներկայությամբ, դպրոցի դիմաց բացվեց Թ. Կրպեյանի բազալտե կիսանդրին, որի հովանավորն է մարտական ընկեր Արմեն Շաիրազյանը: Հերոսի ծննդյան 48 -ամյակին նվիրված տոնական մեծ համերգ կայացավ 2013թ. ապրիլի 27-ին: Ռազմահայրենասիրական, ազգագրական երգերով համդես եկան երգիչներ Լեյլա Սարիբեկյանը, Գոհար Հովհաննիսյանը, Արսեն Գրիգորյանը՝ Մրոն, երջանկահիշատակ Սկրտիչ Մկրտչյանը՝ Մկոն, Դավիթ Ամալյանը, Ռուբեն Սասունցին, Արաբո Իսպիրյանը: Իր անգուղակմունքամբ դարձյալ փայլեց «Կարին» ազգագրական պարի համույթը՝ լուսահոգի Գագիկ Գիմոսյանի ղեկավարությամբ: Տոնին ներկա էին նաեւ հերոսի կինն ու միակ ժառանգը՝ Ասպրամ դուստրը: Խոսելով հոր մասին՝ Ասպրամն ասաց՝ ինքը փոքր է եղել, երբ հայրը մարտիրոսվել է, սակայն հպարտ է, որ հերոսի դուստր է, եւ ազատագրված արաքսամերձ Կովսական քաղաքում հոր անունով կա դպրոց՝ դիմացը կիսանդրին: Ավելացրեց. «Երեխաների աչքերում տեսա այն պատրաստակամությունը, որ նրանք այս երկրի տերն են եւ հարկ եղած դեպքում կնճամվեն Թաթուլին»: Կովսականի «Թաթուլ» ազգագրական համույթը, Կարեն Մարտիրոսյանի ղեկավարությամբ, տարածքի լավագույն մշակութային խումբն է եւ հաճախ է համերգներով հանդես գալիս նաեւ զորամասերում: Համույթն այցելել է նաեւ հերոսի ծննդավայր: «Թեկուզ նահատակ, բայց սահմանապահ». այս կարգախոսով են այսօր բազում անձաի հերոս-հավերժի ճամփորդներ իրենց երկնային կյանքով դաստիարակում մանուկ սերնդին, ողջ մնում մեր սրտերում: 2020թ. սեպտեմբերին սկսված Արցախյան պատերազմում պարտվեցին, 2023-ի սեպտեմբերի վերջին էլ հայաթափ եղավ Արցախը: Պարտք ենք Թաթուլին ու հազարավոր այն քաջորդիներին, որոնք ժամանակին պաշտպանեցին ու ազատագրեցին Արցախը, ամրացրին հայոց սահմանը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՑԱՆ

ԱՐՅԱՆՈՒ ԵՐԱԺՇՏԱԳԵՏԻ ԳՐՔԻ ՀՆՈՐՀԱՆՈՒՄԸ



Գեղեցիկն արարելու համար անհրաժեշտ է հոգով մաքուր լինել: Ս.Գլինկա

Սուրբ իմ հող՝
Սրբությունը մեր հին...
Թե ինչքա՞ն ենք մենք կառչած
քեզ՝
Միայն հողմերը գիտեն,
Հողմերն անցած, հողմերը
գալիք,
Իսկ հողմեր այնքան շատ են
դու ցրել,
Որ հիմա չգիտենք,
Որ մեկը հիշենք,
Որ մեկը հուշենք,
Արար աշխարհում որ մեկը
պատմենք,
Որ մեկը լացենք, շարունակ
երգենք:

Միլաս Մանասյան

Արցախցի երաժշտագետ, Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի դասատու, նշանավոր կոմպոզիտոր Էդուարդ Ղազարովի մասին մենագրության և բազմաթիվ հոդվածների հեղինակ Նինա Հակոբյանը վերջերս երաժշտասեր հասարակայնության (և ոչ միայն) դատին է հանձնել իր հոդվածների երկրորդ ժողովածուն՝ «O muzyke» վերնագրով, որը նշանակալից իրադարձություն է ոչ միայն Հայաստանի, այլև արցախյան երաժշտագիտության պատմության մեջ:

Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ Երևանի Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանում: Նրա առաջին ժողովածուն լույս էր տեսել 2017 թվականին Արցախում՝ «Երաժշտական մշակույթ. պատմության էջերից» վերնագրով:

«O muzyke» ժողովածուն ընդգրկում է հայ դասական երաժշտության հսկաներին՝ Կոմիտասին, Սպենդիարյանին, Արամ Խաչատրյանին նվիրված հոդվածները: Որոշ հոդվածներ էլ լուսաբանում են արցախցի կամ արցախյան արմատներ ունեցող կոմպոզիտորների ու կատարողների կյանքն ու գործունեությունը:

Աշխատանքային կոլեկտիվը, որում հայտնվել է Նինա Հակոբյանը 2023 թվականի բռնի տեղահանությունից հետո, մոտ երկու տարի է՝ նրան հարազատի պես է շրջապատել՝ փորձելով մեղմել այն անհատակ ցավն ու կարոտը, որ կոչվում է հայրենագրկում: Նինան Ալ.Սպենդիարյանի տուն-թանգարանում գիտաշխատող է և այնպես է մերվել կոլեկտիվին, որ իրեն համարում է նրանց մի մասնիկը: Գոր-

ծնկերների ելույթներն էլ էին վկայում, թե ինչպես են վերաբերվում նրան ու ընդհանրապես Արցախին:

Նինա Հակոբյանն անդրադարձավ ժողովածուի՝ իր համար չափազանց կարևոր, իր կողմից խնամքով առանձնացված մի քանի հոդվածների՝ ամեն մեկի հետ կապելով այն քաղցր հուշերը, որ նրան տանում էին հայրենի երկիր, ուր դեռ երջանիկ էին բոլորը՝ չնայած բազում զրկանքներին: Ամեն մեկի հետ յուրատեսակ մի ցավ էր ապրում, ամեն մեկի համար յուրովի տառապում ու տառապել տալիս ներկաներիս: Երբեմն ժպտում էր արցունքների միջից՝ վերհիշելով այն քաղցր օրերի ոգևորությունն ու համառ արցախցուն անկոտրում կամքը:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, արվեստագիտության թեկնածու, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ՝ Նարինե Ավետիսյանը, կարևորելով գրքի

հանդիպումներից, անկրկնելի միջոցառումներից:

Միջոցառմանը ներկա կոմպոզիտոր Էդմոնդ Մակարյանի խոսքերով ու երաժշտությամբ զրկած երգը՝ Արցախի մասին, ներկայացրեց շնորհալի երգչուհի Մարիա Խանդանյանը՝ մի նոր բռնկումով երկինք հասցնելով արցախցիներիս հոգում փոթորկվող կարոտի հրաբուխը:

Դարերի խորքից եկել ես, եղել ես, ապրել ես, իմ Արցախ, Վերջերից ապաքինվել ես, կանգնել ես ու քայլել անվախ,

Բայց իմացիր, հպարտ ու ամուր կանգնած,

Քո ձեռքն ամուր բռնած՝ կողքիդ եմ՝ պաշտպան դարձած:

Արցախ, նորից պիտի առնես թևեր, ազատ արծվի նման հառնես դեպ վեր,

Վաղվա օրվադ համար կյանքն իմ նվեր, որ դու ապրես հավերժ...



«Այո՛, դա լինելու է անպայման, քանի որ Արցախի ժողովուրդն իր անկոտրում կամքով հասնելու է իր նպատակին»,- իր խոսքն այսպես ավարտեց Նարինե Ավետիսյանը:

Գրքի հեղինակ Նինա Հակոբյանը, դ ի մ ե լ ո Վ դ ա հ ի լ ի ծ ի ն, որտեղ հիմնականում

իր համերկացի հարազատներն էին ու գործընկերները, շնորհակալություն հայտնեց բոլորին ու հուզմունքը հագիվ խեղդելով՝ ներկայացրեց, թե ինչպես են ծնվել գրքում տեղ գտած իր հոդվածները, և ինչ դժվարություններով է իրեն հաջողվել տպագրել գիրքը: Որպես Արցախի քաղաքացի՝ նա պարտավորում է ունեցել իր ժողովրդի հանդեպ: Նրան, ինչպես բոլոր արցախցիներիս, երբեք չի թվացել, թե հնարավոր էր կորցնել Արցախը, և քանի որ ինքն այլ գեներացիներ Արցախի համար պայքարելու համար, մնում էր միայն թուլքն ու գրիչը, որ կային իր ձեռքի տակ: Ապավինելով դրանց՝ փորձել է աշխարհին ցույց տալ Արցախի կոմպոզիտորների գործունեությունը ու հանձնել դրանք սերունդներին, որով էլ պիտի հարատևեր 2017-2023թթ. Արցախ աշխարհի մշակութային պատմությունը:

Երբ 2022-ին սկսվեց ծանր ու հոգեմաշ բլոկադան, Նինան մտածել էր, որ վերջ, դատապարտված ենք բոլորս, և այդ հոդվածներն ուղարկել է Հայաստան՝ իր գործընկերներին՝ փրկելու համար՝ չմտածելով անգամ, որ որոշ ժամանակ անց բոլոր արցախցիներն են տեղահանվելու մայր հայրենիք:

Երախտագիտությամբ հիշեց բոլոր այն մարդկանց, ում շնորհիվ նա պասիվ կյանքից անցել է ակտիվ, ստեղծագործական կյանքի: Դա եղել է 2013 թվականին, երբ ինքը հրավիրված էր մասնակցելու համաշխարհային համճար Արամ Խաչատրյանի հորեյանին նվիրված միջազգային կոնֆերանսին: Կոմիտասին կերպարին անդրադարձել է 2012 թվականին:

Ցավով անդրադարձավ նաև այն հոդվածներին, որոնք ծնվել են Արցախի համար շատ ծանր ու անտանելի պայմաններում: Նրանցից մեկն անանուն է («Без названия», տե՛ս էջ՝ 5), քանզի չի կարողանում հաղթահարել հոգու խոր ցավը ու վերնագրել այն:

2020 թվականի պատերազմից հետո Արցախում շատ կոմպոզիտորների հորեյաններ նշվեցին: Դրանք տեղի էին ունենում ցուրտ ու մութ դահլիճներում, որոնք ևս տեղ են գտել ժողովածուի հոդվածների շարքում: Հիշատակեց հատկապես կոմպոզիտոր Զաքար Քեշիշյանի անունը, որը 30 տարի շարունակ Արցախում էր՝ խթանելով նրա մշակութային կյանքը:

Հնարավոր չէր այդ շարքը՝ առանց Ալեքսեյ Դեբյանյանի կերպարի, մի մարդ, որ, մանկուց հո-

սի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Բուդալյանը, որը միշտ եղել է Արցախի հետ, Արցախի մեջ, Արցախի կողքին: Նա կարևորեց Նինայի



գործունեությունը, որ կատարված է սրտի թելադրանքով: Այն ամենը, ինչ կապված է Արցախի հետ, պետք է պահպանվի ՀՀ ազգային գրադարանում:

Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինա Օթարյանը եզրափակիչ խոսքում նշեց, որ երբեք չի մտածել, թե երաժշտական հոդվածներ պարունակող գրքի շնորհանդեսը կարող էր այդքան հուզիչ լինել: Գնահատելով Նինայի աշխատանքը՝ նա ընդգծեց, որ հեղինակը վավերացրել է իր ժամանակի երաժշտական իրադարձությունները: Ծնորհավորելով նրան՝ տնօրենը մաղթեց ստեղծագործական նոր վերելքներ ոչ միայն Մայր Հայաստանում, այլև Արցախում: Հիշատակեց նաև այն հանդիպումներն ու տպավորությունները, որ ունեցել է Արցախ այցելությունների ժամանակ, և թե ինչպես է Արցախից վերադառնալիս իրեն զգացել որպես արցախցի ու վերադարձի ողջ ճանապարհն անցել բուռն ոգևորության մեջ: Նա ևս շեշտեց, որ Նինան, ինչպես նաև բոլոր արցախցիները, իրենց հարազատ հողի վրա են, բոլորը սիրում են նրանց:

Գնահատանքի խոսքեր հնչեցին դահլիճից հարազատների ու գործընկերների կողմից: Հարազատներն ու բարեկամները ծաղկեփնջերով շնորհավորեցին Նինա Հակոբյանին:

«Լուսարար» թերթի գլխավոր խմբագիր Սվետլանա Խաչատրյանը, ամճամբ ծանաչելով գրքի հեղինակ Նինա Հակոբյանին, շնորհավորեց նրան, իսկ տուն-թանգարանի անձնակազմին շնորհակալություն հայտնելով՝ ասաց. «Ես այսպիսի Հայաստան եմ ուզում, ուր բոլորը մեկ են, և չկա տարանջատում»:

Համճարեղ են Ս. Բուլգակովի խոսքերը. «Մարդկային հոգու արարումները նման են լեռների գագաթներին: Նրանց ծյունաճերմակ գագաթները մեր առջև ավելի ու ավելի են բարձրանում, որքան մենք ավելի ենք հեռանում նրանցից»:

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

Լուսանկարները՝

Ալ. Սպենդիարյանի տուն թանգարանի կայքէջից



ՎԵՐՀԻՇԵԼՈՎ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ

2016թ. ապրիլի 2-5-ը Ադրբեջանը ագրեսիա սանձազերծեց հայկական դիրքերի դեմ: Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը դարաբաղա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով հակառակորդը ձեռնարկեց պատերազմական գործողություններ, որոնք տևեցին 4 օր: Հայկական դիրքերի վրա նետվեցին ադրբեջանական լավագույն ստորաբաժանումներն ու ժամանակակից մարտական տեխնիկան, ադրբեջանական բանակը կիրառեց իր զինամոցի գրեթե ողջ զինատեսակները, բայց նրանք անգործ եղան հայ զինվորների արիության դեմ: Միաժամանակյա հարված հասցնելով Արցախի Հյուսիսում եւ Հարավում՝ ադրբեջանցիները հույսը դրել էին հանկարծակիության ու թվային հսկա զերազանցության վրա: Հարվածներ էին հասցվում նաեւ խաղաղ բնակավայրերին, զոհվեցին ու վիրավորվեցին խաղաղ բնակիչներ ու երեխաներ: Սակայն հայկական մարտական դիրքերը պաշտպանող մարտիկների, ժամկետային զինծառայողների արիությունը կանգնեցրեց ադրբեջանցիների հարձակումը եւ զրկեց նրանց հաղթանակի հնարավորությունից: Ապրիլի 5-ին կրակը դադարեցնելու համաձայնություն ձեռք բերվեց, կեսօրին դադարեցվեցին ռազմական գործողությունները:

Մեր զրուցըները ծնվել է 1983թ. Ասկերանում: Պարտադիր զինվորական ծառայությունն անցել է հետախուզական վաշտում եւ զորացրվել որպես հետախույզ: Մասնակցել է 2016թ. Ապրիլյան պատերազմին՝ լինելով զուգարտակի հետախուզական դասակում: 2020թ. 44-օրյա պատերազմին մասնակցել է աշխարհագրորի կազմում: 2022թ. որպես կամավոր միացել է Քարազուխի պաշտպանությանը: 2023թ. ծառայում էր գնդում՝ որպես պայմանագրային զինծառայող: Սեպտեմբերյան վերջին պա-

տերազմի ժամանակ կատարել է համապատասխան առաջադրանք: 2023թ. սեպտեմբերի վերջին իր հայրենակիցների նման տեղահանվել է: Բնակվում է Երեւանում:

Ապրիլյան պատերազմում զինվորների ու սպաների, փորձառու վետերանների գործած զանգվածային սխրանքների բազում օրինակներ կան, որոնց շուրջ խոսեցինք մեր զրուցըները հետ՝ վերհիշելով Քառօրյան:

- «Աշխատում էի Ասկերանի «Դարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ում՝ որպես կապավոր: Ապրիլի 2-ին առավոտյան թշնամին հարձակվում է մեր դիրքերի վրա, ծայրերը լսելի էին նաեւ Ասկերանում: Դեռ հստակ չգիտեի, թե որ կողմից են փորձել առաջ գալ, բայց առաջին բանը, որ անցավ իմ մտքով՝ պատրաստ լինելու անհրաժեշտությունն էր: Գնացի աշխատավայր, խոսակցություն ունեցանք արդեն հավաքված տղամարդկանց հետ, որից հետո արագ գնացի տուն՝ զինվորական հանդերձանքիս հետեւից: Տղաների հետ գնացինք Ասկերանի գունդ՝ մեր հետագա անելիքները ճշտելու համար: Պարզվեց, որ զորահավաքային կազմի մեջ իմ անունը ներառված չէր: Մտածեցի, թե ինչով եմ պակաս, որ իմ անունը չկա: Ձանգեցինք զինկոմիսարիատ, հետո էլ ներկայացաւ այնտեղ, որտեղ ինձ ասացին, որ զորահավաքը հերթով է, եւ հնարավոր է, որ իմ հերթը դեռ չի եկել: Բայց ես չէի կարող սպասել իմ հերթին, ուզում էի արագ օգնության գնալ սահմանագծում կռվող տղաներին: Որոշ ջանքերից հետո իմ անունն էլ հայտնվեց զորահավաքային կազմի ցուցակում, եւ մենք մեկնեցինք Ակնայի՝ Աղդա-մի դիրքերի ուղղությամբ: Դիրքավորվեցինք



ու պատրաստ սպասում էինք համապատասխան առաջադրանքների՝ պատրաստակամ հարկ եղած դեպքում կարճ ժամանակում հասնել թե՛ կետեր: Լսելի էին պատերազմի ծայրերը, ոչ պակաս հայտնի՝ մեր կռվող զինվորների բարձր մարտական ոգու մասին վկայությունները: Մեր զինվորները ոգով ու կամքով ուժեղ էին հակառակորդից, ինչն էլ ապացուցեցին Ապրիլյան պատերազմում: Ակնհայտ էր, որ հայ զինվորն ավե-

լի նախապատրաստված է, քան հակառակորդի էլիտար ստորաբաժանումը, հատուկ նշանակության խմբերը:

Չորս օր հետո ծայրերն այդքան ինտենսիվ չէին, աստիճանաբար սկսեցին դադարել: Տաս օր դիրքերում մնալուց հետո հնարավորություն ունեցաւ տուն գնալ, կարգի բերել ինձ ու նորից գնալ պահանջվող վայր: Չմայած նրան, որ մեր բանակը ժամանակակից համապատասխան զենքերի ու զինատեխնիկայի կարիք ուներ, ինչպես նաեւ թշնամու անհամեմատ թվային զերակշռությամբ, այնուամենայնիվ մեր տղաները, ունենալով բարձր մարտական ոգի ու անմահանք կռվելու կամք ու պատրաստվածություն, կարողացան կասեցնել թշնամու առաջխաղացումը, հետ մղել նրան՝ չթողնելով, որ

հասնի իր ուզածին: Պետք է նշել եւ արժանիորեն գնահատել այն հանգամանքը, որ ամենածանր հարվածն իրենց վրա էին վերցրել ժամկետային զինծառայողները, որոնք փառքով ու պատվով են կատարել իրենց առջեւ դրված խնդիրը: 18-20 տարեկան տղաներն էին կանգնած առաջնագծում, որոնք չէին զիջում ավագներին: Անկախության սերունդը հայրենի սահմանից մի քայլ անգամ հետ չէր կանգնում: Ուս ուսի կանգնած՝ մարտնչում էին եւ կարողացան անգամ կյանքի գնով տեր կանգնել իրենց սրբություններին:

Տեղին է հիշել մեր պատանի մարտիկների սխրագործությունները, որոնցից են 18-ամյա Նարեկ Մալխասյանի ու 19-ամյա Մարատ Պետրոսյանի կատարածները: Նարեկը հակառակորդի նռնականետի կրակոցով ադրբեջանական ՄԻ-24 ուղղաթիռ խփեց, իսկ Մարատը իր ֆազոտով ադրբեջանական 5 տանկ եւ 1 ՀՄՄ ոչնչացրեց:

Քառօրյա պատերազմը բավականին մեծ փորձ տվեց եւ ապացուցեց, որ մենք ամուր կանգնած ենք մեր հողի վրա եւ զիջելու ոչինչ չունենք:

Տարիներ անց խոսակցություններ են շրջանառվում, թե իբր կռվել չգիտենք: Նման խոսակցություններ տարածող ու այդպես մտածող մարդկանց ես մեղմ ասած ասում եմ՝ ամոթ ձեզ: Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվի:

2016-ի ապրիլը դարձավ մեծ փորձության եւ հայ ոգու հաղթանակի շրջան: Հետեւակայինները, հրետանավորներն ու տանկիստները, երիտասարդ մարտիկներն ու վետերանները կատարեցին իրենց պարտքը՝ հայ զինվորի պարտքը, եւ իրենց սխրանքներով նոր հերոսական էջեր գրեցին մեր պատմության մեջ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

БЕЗ НАЗВАНИЯ...

Не так ли война заносит свой бич над беспамятными народами, которые живут, успокоившись, от одного дня истории до другого?
Франц Верфель

Новый 2020-ый учебный год стартовал в Степанакертском музыкальном колледже им. Саят-Новы раньше официально объявленного срока - был снят коронавирусный карантин. Не дожидаясь 14 числа, с первых же дней сентября подтянулись студенты с районов; педагоги приступили к работе согласно утвержденному графику. Масочный режим в учебных заведениях был отменен. Мы подшучивали, что карабахцев даже коронавирус побаивается и обходит стороной. Жизнь шла своим чередом...

27 сентября войдет в историю армянского народа еще одной черной датой. Ранним солнечным воскресным утром над городом раздались залпы огневых орудий. Было понятно, что обстановка более чем серьезная. Что могли предпринять родители в ситуа-

ции, когда город подвергается бомбежке, а дети спят, а больные прикованы к постели? Паники, как таковой, не было. Довольно быстро все спустились в подвал. А через минуту раздался сильный грохот: снаряд попадает в квартиру на первом этаже. Благо, как потом нам объяснили строители, тонкие стены не оказали нужного сопротивления, и снаряд, искорежив две квартиры, не взорвался. Несмотря на то, что обстрел по городу велся беспорядочно, служащие МЧС оперативно сработали и обезвредили снаряд. В этот день соседскому мальчику исполнилось 9 лет. Свечи на большом торте Вовка задул в подвале под общие поздравления соседей...

В подвале мы прожили три дня. 1 октября мы уже ехали по дороге, ведущей в Армению. Дорога напоминала фильм апокалипсис. По узкой горной дороге в направлении к Арцаху тянулась вереница машин с бригадой скорой помощи (в один рейс я сосчитала 16 машин) и машины с гуманитарной

помощью. Тысячи добровольцев со всей Армении, следуя зову сердца, прибывали в Арцах, ценой жизни отстоять Родину. А в другую сторону - сторону Армении, передвигалась колонна с женщинами и детьми. Люди, всю жизнь обустроившие свои дома, землю, ведь не секрет, что трудолюбие - одна из национальных черт армянского народа, люди уносили с собой лишь немного еды, оставляя сыновей, мужей, братьев, отцов в горниле огня, одних, наедине с противником. Простим ли мы когда-нибудь себя?.. Ощущения безысходности тогда не было. Мы твердо были убеждены, что как бы ни было тяжело, все равно мы сможем все преодолеть, и в скором времени жизнь войдет в прежнее русло...

По дороге, уже на территории Армении, нас останавливали местные парни и участвовали предлагали помощь: найти квартиру, дом, устроить нас в районах Армении, если нет родственников или знакомых. Сотни незнакомых людей по всей Армении протянули руку помощи

и предоставили кров людям, очутившимся, казалось, в безвыходной ситуации; сотни людей организовали помощь прибывшим продуктами питания и предметами первой необходимости, медикаментами. Помогали всем, чем могли, безвозмездно...

Хочу поблагодарить педагогов Ереванской государственной консерватории им. Комитаса в лице Н.З.Аветисян, Ц.Г.Мовсес-ян, Г.К. Шагоян, а также Рипсиме за поддержку и внимание, оказанное моей семье; также Э.Г. Гянджумяна, директора Школы искусств им. Х.Кушнарjana, за отзывчивость. Нас окружили теплом, заботой, участием близкие и незнакомые: Ашот Адамян, Марина и Карина Манучарян, Мария Карабекян, Александр Макаров, Мхитар Арутюнян и еще много людей, имена которых нам даже неизвестны, и это поддерживало. А в горле стоял ком, и на глаза наворачивались слезы, и безответным оставались вопросы - почему погибают наши парни? почему погибает гражданское население? нельзя ли было пре-

дотвратить военную агрессию?

...Что произошло дальше, и к чему это привело, нам всем известно. Тысячи павших, отдавших свои жизни за Родину - Честь и Слава Героям... Сотни ребят, пропавших без вести... Тысячи молодых защитников, ставших инвалидами...Тысячи семей, потерявшие на войне близких, вынужденные оставить свои очаги, могилы предков...


Боль и обида не отпускают по сей день.

Прозвучавшее в ночь на 10 ноября сообщение о "капитуляции", ввергло армянский народ - истерзанный, измученный, израненный - в состояние унижения и негодования, сменившееся психологическим ступором и апатией. Народу, фактически, в очередной раз была навязана роль жертвы, и к тому же яростно вменяли ему вину за поражение. Многотысячные митинги за отставку правительства не возымели нужного воздействия и не привели к ожидаемому итогу.

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՅՈՒՄ

ՆՈՐ ԳԻՐՔ՝ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Ապրիլի 17-ին երևանում՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) նիստերի դահլիճում, տեղի ունեցավ «Գիտություն. հանրամատչելիացում, հանրայնացում, հանրախոցակում, զարգացում» գրքի շնորհանդեսը: Գիրքը, որ հոդվածների ժողովածու է, հրատարակվել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում 2025 թվականին: ՀՀ ԳԱԱ ենթակայությանը գործող «Գիտության հանրամատչելիացման և զարգացման ծրագրերի վարչություն»-ը (ԳՀՁԾ), որը ղեկավարում է մ.գ.դ. Կամո Աթայանը, արդեն մեկ տարվա պատմություն ունի, և շնորհանդեսը նաև այդ առիթով էր:



հանրամատչելի հոդվածները, հարցազրույցները, գրքերը: Այդ խնդիրներին նվիրված՝ նաև տպագրվել են մասնագիտական հանդեսներ, թերթեր և այլն: Ինչ վերաբերում է նոր հրատարակված գրքին՝ այն իր տեսակի ու կառուցվածքի առումով առայժմ եզակի է: Բաղկացած է 5 գլխից՝ «Հանրամատչելիացումը՝ հիմնախնդիր», «Մաթեմատիկայի և բնական գիտությունների հանրամատչելիացման առանձնահատկությունները», «Հումանիտար հասարակագիտական ուղղությունների մատչելիացման և գիտության հանրայնացման խնդիրները», «Գիտության հանրայնացման խնդիրը» և «Հարցազրույցների շարք»: Կարևորեց այն հանգամանքը, որ իրենց նախածոնությունը լինի շարունակական:

Գրքի խմբագիր, ԳՀՁԾ աշխատակից Արթուր Ղարաբյոյանն ասաց՝ պետք է գիտնականները նաև մատչելի ներկայացնեն իրենց հոդվածները, հատկապես մատչելի լինի դպրոցականների, ուսանողների համար: Նշեց նաև՝ համոզված է իրենց վարչությունը նշված խնդիրների լուծման նպատակով կհամագործակցի գիտահանրամատչելի ամսագրերի և լրատվամիջոցների հետ, կաջակցի նրանց գործունեությանը: Կարևորեց նաև գործունեությունը մարզերում:

Ընթացքում եղան ելույթներ, և բոլորն էլ կարևորեցին գիտության հանրամատչելիացումը: Առանձնակի շեշտվեց այն հանգամանքը, որ դպրոցներում ստեղծվեն սովորողների ինքնագաղափարացման, ինքնաիրացման մեխանիզմներ, որոնք կնպաստեն

նրանց մասնագիտական կողմնորոշմանը:

Բնագիտական գիտությունների ներկայացուցիչներն անդրադարձան հատկապես քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա առարկաների ներկա ոչ բարվոք վիճակին: Այս հարցում կարևորվեց պետության դերը: Իր ելույթում ակադեմիկոս Ռ. Կոստանյանը առանձնացրեց ֆիզիկայի դերը բոլոր գիտությունների զարգացման համար: Խոսելով գիտության հանրամատչելիացման մասին՝ կարևորեց մեկամյա վարչության դերը: Նշեց՝ դեռևս խորհրդային տարիներին Գիտությունների ազգային ակադեմիայում կատարվում էին աշխատանքներ հանրամատչելիացման ուղղությամբ, բայց ոչ համակարգված: Ակադեմիայի ինստիտուտները համագործակցել են դպրոցների, երիտասարդների հետ, բայց առանց ոլորտը համակարգող կառույցի: Ցավով նշեց՝ այժմ չա-

նշանակում է՝ բաց ունենք և այդ բացը լրացնելու խնդիր», - հավելեց Պ. Ավետիսյանը և ողջունեց աշակերտներին ակադեմիա հրավիրելու, գիտությանը ծանոթացնելու առաջարկը: Քիմիկոս, մ. գ. դ., պրոֆեսոր Լ. Սահակյանը նույնպես անդրադարձավ բնագիտական առարկաների, հատկապես քիմիայի ներկայիս տիտուր վիճակին: Նշեց՝ վերջերս չի գտել մի ուսանող, որ մասնակցեր քիմիայի օլիմպիադայի, այն դեպքում, որ տարիներ առաջ շատ են եղել մասնակիցները: Ողջունեց ՀՀ ԳԱԱ-ի համակարգում նոր վարչության դերը՝ հավատով, որ այն իր դրական ազդեցությունը կունենա ՀՀ-ում գիտական իմացության հանրայնացման գործընթացում: ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ. Արսեն Ընթոյանի ներկայացմամբ՝ ներկա ժամանակներում տնտեսագիտությունը ոչ միայն գիտական համայնքի, այլ նաև պետական, հասարակական և մասնավոր հատվածի համար կարևոր տեղեկությունների աղբյուր է: Ձարգացող տեխնոլոգիաների զլուրբալացման և թվային տնտեսության խթանման հետ զուգահեռ՝ տնտեսագիտության հանրային հասանելիությունն անհրաժեշտություն է:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ներկայացուցիչ, բ. գ. թ. Սիրանուշ Հովհաննիսյանը կարևորեց լեզվա-



տերն ընդունվում են ֆիզիկայի ֆակուլտետ, սակայն հետագայում զբաղվում են ավելի բարձր աշխատավարձ ապահովող աշխատանքով: Իսկ ֆիզիկայի բնագավառում մնում են միայն նվիրյալները:

Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը, կարևորելով ԳՀՁԾ-ի դերը, ասաց՝ ԳԱԱ-ն պետք է ունենա նման կառույց, որը կտարածեր, կպրոպագանդեր գիտության դերը՝ նրա մեջ ներգրավելով ուսանողներին, աշակերտներին, երիտասարդությանը: «Հարկավոր է վերականգնել գիտության պաշտամունքը», - հարցազրույցի ժամանակ ասել է Հ. Սահակյանը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը նշեց՝ ինքը սոցցանցերում հետևում է լրատվությանը, և շատ կեղծ գիտական, հակագիտական նյութեր կան: «Սա

բանության դերը որպես գիտություն՝ նշելով, որ այն ոչ միայն ուսումնասիրում է լեզվի կառուցվածքը, այլև դրա գործառնությունները, զարգացումը և ազդեցությունը մարդու և հասարակության կյանքի տարբեր կողմերի վրա: Իսկ գիտության հանրայնացումը, մասնավորապես՝ լեզվաբանության, լեզվին առնչվող գիտական աշխատանքը լայն հանրությանը հասանելի, մատչելի ներկայացնել է:

Գրքում կան հոդվածներ նաև նվիրված հնագիտությանը, ազգագրությանը, աստղագիտությանը, իրավագիտությանը: Եղան այլ ելույթներ ևս, քննարկվեցին մի շարք հարցեր: Ընթացքում գրուցեցի Կ. Աթայանի հետ, ասաց՝ տարվա կտրվածքով գոնե մեկ գիրք պետք է հրատարակեն, և այդ առումով պետք է շատ գործ արվի:

Ջոհրաբ ԸՈՔՈՑԱՆ

ԻՆՉՊԵՍ ԽԹԱՆԵԼ ՀԵՏԱԲՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻԶԻԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ֆիզիկան ոչ թե պարզապես գիտություն է, այլ աշխարհը հասկանալու բանալին:

Ահա այս թևավոր խոսքով Գանկանում են ցույց տալ ֆիզիկայի կարևորությունը: Ֆիզիկան համարվում է բնական գիտությունների հիմնասյուներից մեկը, սակայն շատ աշակերտների համար այն բարդ և չոր առարկա է: Հետաքրքրության բացակայությունը կարող է պայմանավորված լինել դասավանդման մեթոդների միօրինակությամբ կամ առարկայի կիրառականության ընկալման պակասով: Առարկայով հիմնականում հետաքրքրված են ավելի շատ տղաները, քան աղջիկները: Ահա ներկայացնեն այն փոքրիկ պատմությունը, որն ինձ ոգեշնչեց, և ես սիրեցի առարկան.


Երբ դպրոցում ուսումնասիրում էինք ֆիզիկան, այն ինձ թվում էր

անհասկանալի, թվերով և բանաձևերով լի առարկա: Չէի հասկանում, թե ինչու պետք է սովորեմ բոլոր այդ օրենքները, մինչև որ մի օր ուսուցչուհիս մեզ առաջարկեց մի պարզ, բայց զարմանալի փորձ:

Դասի ընթացքում նա վերցրեց մի գավաթ ջուր, վրան ավելացրեց զուլավոր կաթիլներ, ապա գոլուշությամբ սկսեց ավելացնել բուսալուղ: Ապա հարցրեց.

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է տեղի ունենալու, երբ այս խառնուրդը խառնենք:

Աշակերտներից հնչեցին տար-



բեր պատասխաններ: Սակայն, երբ սկսեցինք խառնել, տեսանք, որ զուլավոր կաթիլները բաժանվում էին հետաքրքիր շերտերի: Ուսուցիչս բացատրեց խտության և մակերեսային լարվածության մասին, և այդ պահին ես հասկացա, որ ֆիզիկան ոչ միայն բանաձևեր են, այլ նաև իր ա կ ա ն ո թ յ ա ն հրաշալի բացատրությունները:

Այդ պահից սկսած՝ ես սկսեցի նայել աշխարհին այլ կերպ՝ փորձելով ամեն ինչում տեսնել ֆիզիկայի օրենքները: Քայլելիս մտածում էի ձգողության մասին, ծայր լսելիս՝ ալիքների, իսկ ամպրոպի ժամանակ փորձում էի հաշվել կայծակի և որոտի միջև եղած

ժամանակը՝ հեռավորությունը որոշելու համար:

Ֆիզիկան ինձ համար դարձավ ոչ թե պարտադիր առարկա, այլ՝ հետաքրքրաշարժ ճանապարհ դեպի աշխարհի գաղտնիքների բացահայտում: Այժմ դասավանդում եմ Արմավիրի մարզի Արագածի գյուղի Թ.Հուրյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկա առարկայի ուսուցչուհի: Դասավանդում եմ արդեն շուրջ 14 տարի:

Այո, ուսուցչի հիմնական առաքելությունն է ցույց տալ, որ ֆիզիկան ամենուր է՝ սմաթֆոնների էկրանից մինչև մեքենաների արգելակման համակարգերը:

Դասերը հետաքրքիր դարձնելու համար կարելի է սկսել առօրյա երևույթների քննարկմամբ, տեսադասեր դիտելով՝ առաջարկելով աշակերտներին վերլուծել տեսանյութեր, որտեղ ֆիզիկական երևույթները դրսևորվում են իրա-

կան կյանքում, խաղային մեթոդներով՝ հանելուկներ, քվիզեր և վիկտորինաներ, ֆիզիկայի լաբորատոր խաղեր, մրցույթներ, մախազային աշխատանքներ:

Իմ դասավանդման փորձը ցույց է տալիս, որ ֆիզիկայի նկատմամբ հետաքրքրության խթանումը պահանջում է մոտարարական մոտեցում: Ինտերակտիվ և խաղային մեթոդների կիրառումը, ինչպես նաև առօրյայի և տեխնոլոգիայի հետ կապերի ստեղծումը կօգնեն աշակերտներին ընկալել, գնահատել և սիրել այս հրաշալի գիտությունը: Ուսուցիչների համար կարևոր է փորձարկումները, թիմային աշխատանքը և հետաքրքիր դասավանդման մեթոդները, որոնք կփոխակերպեն ֆիզիկայի ընկալումը դպրոցում:

Գրեպա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՔՆԱՎԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՆՈՋ ԴԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսօր փոխվում է կնոջ համ-դեպ վերաբերմունքը, հիմա նրա մեջ չեն տեսնում միայն տնային տնտեսուհու, որին անհանգստացնում են միայն երեխաների դաստիարակությունն ու ամուսնու մասին հոգ տանելը: Պատմության մեջ մնաց կնոջ՝ տան օջախի պահպանի վերագրումը: Ներկայում կանայք տղամարդկանց հետ հավասար ակտիվ մասնակցություն են ունենում մեր երկրի ու հասարակության առջև ծառացած՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրների լուծման մեջ: Ներկա պահին կինը ղեկավար է, կազմակերպիչ, գաղափարական աշխատակից: Կինը կայուն զարգացման գաղափարների տարածողն է:

- «Մարդ լինելը շատ բան է, բայց կին լինելը՝ ավելի», -ասել է ֆինն գրող Մարտի Լարնին:

Առաջին հերթին կինը մայր է, որը ծննդաբերում է, կերակրում, հազցնում ու պաշտպանում իր



- Ո՞վ է ժամանակակից կինը:
- Ժամանակակից կինը հավասար իրավունքներ ունեցող, ակտիվ եւ ինքնազարգացող՝ հասարակության անդամ է: Նա անկախ է բոլոր ոլորտներում, ինքնուրույն պլանավորում է իր կյանքը, կրթվում է ու աշխատում, ինքնուրույն որոշում է զբաղվել մասնագիտական, հասարակական, քաղաքական կամ այլ կարիերայով: Կինը սովորել է ոչ միայն իմաստուն լինել, այլեւ՝ խելացի: Նրան չի արգելվում գործունեության ոչ մի ձև: Ոչ մեկը եւ ոչ մի բան չեն ստիպում նրան զբաղեցնել որեւէ տեղ սոցիալական միջավայրում: Ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ կինը սովորել է, թե ինչպես ավելի զեղեցիկ լինել: Նա քայլում է ժամանակի հետ: 21-րդ դարի կինը ուժեղ է, նա թույլ չի տալիս անհարգալից վերաբերմունք իր հանդեպ: Նա կանգ չի առնում ձեռք բերածի առջև, ձգտում է հասնել ավելիին:

- Որո՞նք են ժամանակակից կնոջ գործառնությունները:

զավակին: Սոցիալական եւ հոգեբանական մակարդակները որոշվում են նրա այնպիսի գործառնությունների հաշվին, ինչպիսին են հոգատարությունը, աջակցությունը, դաստիարակությունը, երեխաների պահանջմունքների բավարարումը, օգնության ցուցաբերումը, կրթելը, փորձի փոխանակումը: Պետք է նշել, որ այս գործառնությունը նշանակալի է ու արժեքավոր մեզ՝ հայ կանանց համար: Ի տարբերություն, այսպես կոչված, զարգացած երկրների կանանց, մեր կանայք ընտանեկան արժեքները վեր են դասում մասնագիտական կարիերայից: Ավելին, մենք հասցնում ենք եւ՝ երեխաներ դաստիարակել, եւ՝ մասնագիտական առաջընթաց ունենալ: Եվ, ճիշտն ասած, դա ուրախալի է:

Կինը՝ տանտիրուհի, որն իր օջա-

խի պահպանում է, ընտանիքում հարմարավետություն ստեղծողը, տան մաքրությանն ու կարգապահությանը հետեւողը, բարի մթնոլորտ ու մարդկային հարաբերությունների ջերմությունը պահպանողը: Նա՝ որպես ամուսնու օգնական, աջակցում է նրան իր մեկնարկներում, օգնում է բացահայտել նրա լավագույն ընդունակությունները: Նա լիցքավորում է իրենով ամուսնու եւ ողջ ընտանիքի կյանքը:

Կինը՝ աշխատակից, ճկուն է որոշումներ կայացնելիս, ավելի ուշադիր է, պատասխանատու, նա ի վիճակի է հասնել ավելի մեծ հաջողության գործունեության ցանկացած ոլորտում. յուրացնել բարդ գիտություններ, մտցնել կառուցողական առաջարկներ տվյալ կազմակերպության զարգացման մեջ:

Ստեղծագործ կին: Նա ոգեշնչում է եւ արարում:

- Սեռերի միջեւ խորականություն չունեցող հինգ է տալիս հասարակությունը:

- Կանայք ու աղջիկները կազմում են երկրի բնակչության կեսը, դա մարդկության ամբողջ ներուժի մեկ երկրորդն է: Սեռային հավասարությունը կարեւոր դեր է խաղում հասարակությունում խաղաղության ու համաձայնության ապահովման, կայուն զարգացման համար մարդկային ներուժի լիարժեք իրացման մեջ: Հասարակական կյանքի մեջ կանանց ներգրավումն ապահովում է նաեւ տնտեսական աճ: Աշխարհը շատ է փոխվել, առաջացել են մեծ հնարավորություններ, կան շատ հետաքրքիր բաներ, եւ կանայք ուզում են իրադարձությունների կենտրոնում լինել, ինչ-որ կարելի էր բան անել: Բարեբախտաբար մեր երկրի բարոյական նորմերն ու մեր դաստիարակությունը դեռ

թույլ են տալիս, որ մեր մայրերը, քույրերը եւ կանայք պատշաճ հարգալից վերաբերմունք վայելեն իրենց հանդեպ:

- Ակնհայտ է, որ բուհերում սովորող ուսանողների մեծ մասը աղջիկներ են: Բարձրագույն կրթությունը ի՞նչ է տալիս կանանց:

- Կրթված կինը կրթված ազգն է: Սա լոկ թեւավոր խոսք չէ: Առաջին հերթին կրթված կինը կարող է շատ ավելին տալ իր երեխաներին, եւ դա շատ կարեւոր է: Լայն մտահորիզոն ունեցող կինը հետաքրքիր է իր շրջապատին, նախ՝ ամուսնուն, երեխաներին, ինչպես նաեւ գործընկերներին, հարեւաններին: Նա տրամադրված է ոչ միայն ընտանիքով ու երեխաներով զբաղվելու ուղղությամբ, այլեւ կարող է իրեն թույլ տալ զբաղվելու երազանքի իրականացմամբ: Նա ակտիվ մասնակցություն է ունենում հասարակական կյանքում, զբաղեցնում է պատասխանատու պաշտոններ: Երկար ժամանակ ղեկավար պաշտոնները զբաղեցնում էին առավելապես տղամարդիկ, մինչդեռ վերջին շրջանում այդ միտումը սկսել է զգալիորեն փոխվել: Կնոջ դիվանագիտությունը, սուր միտքը, հնարամտությունն ու խոհեմամտությունը դարձնում են նրան անփոխարինելի եւ հաջողակ՝ որպես խոշոր կազմակերպությունների գլխավորող:

- Արդյո՞ք բավարար ուշադրության են արժանանում հարազատի կորստի վիշտն ապրող, հայրենագրության դառնությունը զգացած, բռնատեղահանվելուց հետո դժվարությունների բախված արցախցի կանայք:

- Արցախցի կանայք որքան նուրբ ու զգայուն են, նույնքան էլ ուժեղ են ու դիմացկուն: Շատ կարեւոր է, որ Մայր Հայաստանում

արցախցի կանայք անուշադրության չմատնվեն, ինչը բարեբախտաբար այդպես է: Հնարավորն արվում է, որ մեր մայրերն ու կանայք հաղթահարեն ճգնաժամային, ողբերգական փուլը: Հուսահատվելն ու ոչինչ չանելը չեն փրկում: Բռնի տեղահանված արցախցի կանանց համար բազմաթիվ ծրագրեր են կազմակերպվում, որոնց մասնակցելը նպաստում է նրանց մասնագիտական ներգրավվածությանն ու հոգեւոր-ցիալական արագ վերականգնմանը: Իհարկե, աջակցման ծրագրերը չեն կարող փոխարինել աշխատանքին: Հիմա, առավել քան երբեք, արցախցիներն աշխատանքի, ինքնադրսեւորվելու, իրենց օգտակար զգալու կարիք ունեն: Ոմանք կարողանում են հաջողության հասնել իրենց ձեռնարկումներում, ինչն էլ օգնում է կազդուրվել, ապաքինվել: Արցախցի կանայք լավ օրինակ են ծառայում հայաստանաբնակ կին հայրենակիցների համար՝ մոտիվացնելով նրանց դժվարությունների առջև չմահանջելով, ներդաշնակություն պահպանելով՝ հաջողությունների հասնելու:

Միեւելի՛ կանայք, մայրեր ու քույրեր, շնորհավորում եմ Մայրության եւ զեղեցկության տոնի առթիվ՝ ցանկանալով երջանկություն, լիակատար ներդաշնակություն, կանացի հմայք ու զեղեցկություն: Շարունակեք ձեր հոգատարությամբ ու մկրվածությամբ նպաստել ձեր ընտանիքների բարօրությանը, եւ հիշեք, որ դուք կարող եք նոր գաղափարների տարածողը դառնալ՝ օգնելով լուծել այն խնդիրները, որոնք որոշում են մեր վերադարձի ճանապարհը դեպի նոր Արցախ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

БЕЗ НАЗВАНИЯ...

5 ...К концу ноября народ стал постепенно возвращаться в свои дома. Вернулись и те, кто потеряли родных, потеряли отеческий дом, трудом нажитое добро. Возвращались, преодолевая боль, гнев, бессилие...

Постепенно возобновилась работа городского транспорта, сферы обслуживания населения, библиотеки, больницы, хлебопекарни, кафетерии; подключили электричество, восстановили интернет (хотя, как это обычно бывает после военных действий, до сих пор случаются перебои с подачей электроэнергии, интернета и телесвязи).

Приступили к занятиям и образовательные учреждения районов. В Степанакерте функционируют средние и старшие общеобразовательные школы, Детская музыкальная школа им. Комитаса, Детская школа

искусств им. Гюрджяна, Центр Детско-юношеского творчества, Детско-юношеская спортивная школа, спортклубы, Центр инновационных технологий ТУМО, ПТУ, дошкольные учреждения, медицинский колледж, хореографический колледж, музыкальный колледж, Арцахский государственный университет, Университет им. Нарекаци, Университет Месроп Маштоц и другие. Улицы и дома, пострадавшие во время войны, приводятся в порядок; чистота и уют по-прежнему характеризуют Степанакерт - нашу красавицу-столицу. Словом, к работе приступили все государственные и частные предприятия и образовательные учреждения в оставшихся районах.

Спустя менее полутора лет противники взорвали газопровод, обеспечивающий горячим все население Арцаха, в результате

чего больницы и школы оказались без отопления, закрылись многие хлебопекарни... К месту подрыва не подпускают работников Арцахгаза; переговоры МС не приводят к каким-либо результатам.

Через две недели газ был восстановлен, однако очередное перекрытие подачи газа стало и последним...

Во время ремонтных работ водопровода, ранее взорванного также на отрезке, контролируемом стороной неприятеля, был убит молодой работник водоканала...

Вот уже несколько недель не прекращаются обстрелы мирного населения, проживающего в селах Аскеранского района...

Население Арцаха живет в сложных условиях. Да, оказывается помощь - материальная и социальная беженцам - именно так можно назвать "переселен-

цев" - людей, насильно изгнанных со своих земель. Да, трудовая занятость беженцев была обеспечена в первую очередь; да, в краткие сроки были завершены строительные работы и сданы в эксплуатацию несколько жилых кварталов; да, за год населению были предоставлены бесплатные и частично компенсируемые правительством коммунальные услуги, кредиты.

Но могут ли эти меры заглушить боль кровотокающей раны?... Боль от потери тысяч жизней, боль от потери родины... Можно ли считать полноценной жизнь в своем доме, каждую минуту ожидая возобновления боевых действий, держа наготове лишь документы и теплую одежду для детей, не строя планов на будущее?

По мнению психологов одним из самых тяжелых чувств, пере-

живаемых человеком, является состояние неопределенности. Неопределенность лишает человека возможности строить планы на будущее. Невозможным становится планирование действий на месяц, на неделю или хотя бы на день. Этот режим жизни под снайперским прицелом продолжается третий год. Некогда цветущий, сверкающий всеми красками город погрузился во мрак...

Я желаю своему народу выдержки, терпения, благоразумия. Молодежь (с большой буквы) наша - золотая и это наше бесценное богатство. Я надеюсь, что им удастся построить лучшее будущее, достойное их самих, а слезы сменяются детским смехом.

Нина Аконян
Степанакерт, 2021г.

ԳՐԱԿԱՆ ԱՐՅԱՆ

ԿԱՍՏ ԲԱԼԱՅԱՆ

ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

***** Մարդկային գոյի սրբասուրբ ակունք, Անհուն ու խորունկ, նոր կյանքի երկունք, Հավիտենական Բերկրանք ու բուրմունք, Մեղեդի գարնան և լույսի արբունք, Տաճար ու խորան, Մշտաբույր իմ խունկ, Արև ու երկինք՝ և լուրթ ու կապույտ... ***** Եվ ճիչն առաջին՝ որդու ծննդյան, Եվ ծուխը խաղաղ, հացը՝ թոնրատան, Եվ սերն ու բարին, Ձեր տիեզերական, Երբ Ձեր հոգու մեջ խինդն է անսահման, Եվ ձեր հայացքում շողն արեգական, Հայոց հիմավուրց, փառավոր օջախ, Մանկանց օրորոց, երգեր մայրական... ***** Եվ անգամ վշտի ու ցավի խորքից, Օրերում այս մութ և օրհասական, Երբ տառապանքի գետերն են լցվել, Վիհերն են բացվել, Ոգու կործանման, Երկրներ խառնակ, օջախներ՝ փլատակ, Մարդիկ մեղսունակ, անարժան, անարգ, Անբարո վարքի, պղծանքի, կրքի, Նենգամիտ մտքի ու հոխորտանքի, Ձենքերն են ճոճվում, չարի, չարիքի, Եվ մոլեգնում են ուժերը դաժան... ***** Եվ մոլորակը, քուրա, խառնարան, Թույլը իր երկրից, Տնից տարահան, Եվ ժամանակներ՝ մահվան ու արյան, Ծախված սրբություն, Թալանված խորան, Մայրեր՝ իմաստուն, հոգնած ու անքուն, Դուք ամեն վայրկյան, Մեզնից անբաժան, Ե՛վ համբերության, և՛ հույսի օվկիան...	***** Փառաբանություն՝ Ի՛մ մեծ նախատատ, արմատն իմ գոյի, Արարիչ ՏԻՐՈՋ, նախաստեղծ դու՝ կին, Իմ մեծ մայր՝ ԵՎԱ... ***** Անգամ թե դարձար, Դու սկիզբ ու պատճառ, Մեղսալից օրվա, Դրախտ ու մեղքի, բարու և չարի, Դժոխք ու դատի՝ Ե՛վ գոհ, և՛ վկա... ***** Փառաբանություն, Ո՛վ, սուրբ Տիրամայր, Դու Աստվածուհի և Աստվածամայր, ՄԱՐԻԱՄ՝ հրաշափառ, Եվ հեզ ու խոնարհ, բարի և արդար... ***** Տեսար ու տարար, Կորուստ ու զրկանք, Հոգուդ երկնքում, Խորին հավատամք, Տառապանք ու կամք... ***** Դու անբիծ ակունք, սուրբ ու անարատ, Անսպառ՝ հավատ... ***** Եվ դու մեր ճամփան, չհատվող հույսի, Դու մայրերի մայր, օծյալ ՔՐԻՍՏՈՍԻ, Փրկության դուռը, Ծիրը անվախճան՝ երկնային լույսի... ***** Փառաբանություն, գոհություն և սեր, Աշխարհի՛ մայրեր...	***** Ձեզ խաղաղություն և երջանկություն, Երկրպագություն, արևշատություն, Ծիծաղ ու ժպիտ, խինդ ու ցնծություն, Գարնան թարմություն և զվարթություն, Եվ սպասումներին Ձեր՝ արդարացում, Եվ Ձեր վշտերին՝ արդար հատուցում, Օրինանք ու աղոթք և խոնարհություն... ***** Փառաբանում եմ՝ Եվ Ձեզ, Աստղիկներ ու Անահիտներ, Հայոց հնամյա, հեթանոս ոգու, Սուրբ աստվածուհիներ... ***** Մայրության, սիրո, Պտղաբերության և առատության, Ցավը երկունքի լույսով բաբախի, Նորոգ ու հղի, հայոց օջախի, Դռները բախի, Դռները բացի... ***** Փառաբանություն Ձեզ, հայո՛ց մայրեր... ***** Մի բուռ նշխարի, բիբլիական տան, Լույս օրորոցի սուրբ պահապաններ, Որ դարեր ի վեր, երկնել եք, ծնել, Սնել, գուրգուրել, պատվել ու պաշտել, Դուք աստվածային, ուստրեր ու դուստրեր, Եվ ծուխ ծխանին՝ միշտ՝ վառ եք պահել... ***** Հիմնավորց երկրի, տապանից Նոյի, Կտրել ու անցել՝ խավար ճամփաներ, Կրել հավատի, հույսի ծանր բեռ Դուք սուրբ այս հողի, փրկության դռներ...	***** Մայրեր, մեր մայրեր, Երկինք ու երկրի աներեր սյուներ, Մարդկային գոյի, հարատևության, Լինելության, շարունակության, Կենսալից ակունք, ծաղկունք ու երկունք... ***** Եվ խաղաղության հրեղեն թևեր, Եվ հավերժական, մի-մի արևներ, Հայոց աշխարհի փառահեղ մայրեր, Եվ ծնվածները՝ ոգու արիներ, Եվ ծնվածները Սրբազան երկրի սուրբ տիրամայրեր՝ Մահվան դեմ առ դեմ, աներեր այրեր... ***** Փառաբանում եմ Ձեզ, հայո՛ց մայրեր, Որ պիտի ծնեք և մեզ ընծայեք, Դեռ հազար - հազար Առյուծ որդիներ... ***** Դեռ նոր Տիգրաններ, Դավիթ, Վարդաններ, Դեռ պիտի բացեք փառքի նոր էջեր, Եվ պիտի գործեք դեռ նոր սխրանքներ.. ***** Եվ ավետում եմ, Որ հավերժ լինեք, Պտղաբերությամբ, սիրով դուք լցված, Եվ ավետում եմ, Որ կանգուն մնա երկիրն Ավետյաց, Լեռն՝ ԱՍՏՕՈ, Լեռը մեր՝ անանց, Փառաբանություն հայոց մայրերին, Հայոց աշխարհի սրբասուրբ կանանց...
--	---	--	--

Արցախի բանահյուսություն

ԱՍՈՒՅԹՆԵՐ

<i>Սկիզբը՝ նախորդ համարներում</i> 292. Աստուծ մի երկան մուրդուվան ա շինալ, վրեր մինը պըցրանա, մինը քըշանա: - <i>Աստված մի երկար սամդուղք է սարքել, որ մեկը բարձրանա, մյուսը՝ իջնի:</i> 293. Կնեգյը չանան չարխու չանել, հղցումը վեննը կըենա: - <i>Կինը չաչանակ կտրած՝ ճանապարհին չի կանգնի:</i> 294. Կընեգյ օլաբանը ռըխան գիդի չիմիլ: - <i>Կին արարածը բերանից թույլ չպիտի լինի:</i> 295. Վըրե տյուս ըս քինում հետատ եշի, բալի խազնա ըս վեր քըցալ: - <i>Որ դուրս ես գնում, հետևիցդ նայիր, գուցե գանձ ես վեր գցել:</i> 296. Վըրե մի տեղա մին պյեն յոր օնիս, բիդի նորը տըեղը տինիս: - <i>Որ մի տեղից մի բան ես վերցնում, պետք է նորը տեղը դնես:</i>	297. Շոնը հաչի՝ քյարվանը քյինա: - <i>Շունը հաչի, քարավանը գնա:</i> 298. Ծուն կյուղանողը, ծի էլ կըկյուղանա: - <i>Ձու գողացողը ծի էլ կգողանա:</i> 299. Հավը տանը կըենա, կոտը օտե: - <i>Հավը տանը մնա, կուտը ուտի:</i> 300. Գեւլի եր կընալան չի, աստուծ տալան ա: - <i>Շուտ վեր կենալուց չի, աստված տալուց է:</i> 301. Շընըաճանջին պյունին մի չըն կյալ: - <i>Շնամեղվի բնին չեն դիպչի:</i> 302. Էշան կյարունը հըրցրեն, թա՝ ինձ հինջ: - <i>Էշից գարուն հարցրին, ասաց՝ ինձ ի՞նչ:</i> 303. Կատվեն վազ տալը մինչև մարաքը կինի: - <i>Կատվի վազքը մինչև մարազը կլինի:</i> 304. Թա տիրալ ըս, եք եր կալ: - <i>Թե դրել ես, արի վերցրու:</i> 305. Մին պենը՝ մեհետ կասին: - <i>Մի բանը մի անգամ կասեն:</i>	306. Մըրդըվան, մըրդըվան տարե ա, մինը պըցրանում ա, մինը՝ քըշանում : - <i>Աստիճան, աստիճան տարի է, մեկը բարձրանում է, մեկը՝ իջնում:</i> 307. Կյողը հուրթավն էլ մի կըմննե: - <i>Գողը երդիկից էլ կմտնի:</i> 308. Հավեն վըրե կոտ չի տաս, ծու չածել: - <i>Հավին որ կուտ չտաս, ծու չի ածի:</i> 309. Հավեն հարուր հետ քիշ ըրա, էլիա մընման ըղնում ա: - <i>Հավին հարյուր անգամ «քիշ» արա, էլի մոռանում է:</i> 310. Դըխպին հավան պեցուր կըինի: - <i>Լըբի ծայնը բարձր կլինի:</i> 311. Անումը տո, տուփրան քըցի: - <i>Անունը տուր, սփռոցը փռիր:</i> 312. Մոր բախտը՝ ըխճըկանը փեշկումը կըինի: - <i>Մոր բախտը աղջկա փեշում կլինի:</i> 313. Սարը սարեն մի չի կյալ, մարթը մարթին մի կըկյա: - <i>Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի:</i>	314. Շըները քուլուլ կացեն, օգողեն բախտը պիրալ: - <i>Շներըն իրար քոլուլեցին, ուզողի բախտը բերեց:</i> 315. Մոկունը վեր ըղնումա կարաքը՝ մուրտառումա: - <i>Մուկը որ ընկնում է կարասը, հարամում է:</i> 316. Երկու դոչու կըլոխ մին ղըզղանում իփիլ չըն: - <i>Երկու դոչի գլուխ մի կաթսայում չեն եփի:</i> 317. Խաթան նըհախ տըեղան կըինի: - <i>Փորձանքը իզուր տեղից կլինի:</i> 318. Ծովն ըղնողը թռռան վախել չի: - <i>Ծովն ընկնողը անձրևից չի վախենա:</i> 319. Քաշեն խընամեն քըչեղակը կըինի: - <i>Ազոավի խնամին կաչաղակը կլինի:</i> 320. Ըռըխեն յեշի, քաշ տալիս տըրխըմաշին: - <i>Բերանին նայիր, քարշ տալիս տրեխամաշին:</i> 321. Գըպատըտ քոլատ կըտրե: - <i>Գիպոտդ քոլիցդ կտրիր:</i> 322. Թըմբալին հետե ամեն օր գիրեգի ա: - <i>Ծույլի համար ամեն օր</i>	<i>Կիրակի է:</i> 323. Հայ-հայը քյեցալ ա, վայ-վայն ա մնացալ: - <i>Հայ-հայը գնացել, վայ-վայն է մնացել:</i> 324. Պյուլերը շատ կոխ չըն տալ: - <i>Խմորի գնդերը շատ չեն կոխկրտի:</i> 325. Քու եղըտ քյեզ ինի, իմ թանես մի չի կյաս: - <i>Քո յուղը քեզ լինի, իմ թանին ձեռք չտաս:</i> 326. Թանես թթո չասիս: - <i>Թանիս թթու չասես:</i> 327. Հարթենն լյավը չիմիլ, ըխճըկանը՝ փիսը: - <i>Հարսի լավը չի լինի, աղջկա՝ վատը:</i> 328. Շոնը քյընում ա, շախկան ռըխեն: - <i>Շունը գնում է, մորթած անասունի մսի կեսը՝ ըռխած:</i> 329. Խոխան հիշքան ազիզ ինի, խրատը նանա ազիզ կըինի: - <i>Երեխան որքան սիրելի լինի, խրատը նրանից սիրելի կլինի:</i> <i>Շարունակելի</i> Ադելա/Արշալույս/ՍԱՐԳՍՅԱՆ
--	---	---	---	---

ՀԱՌԱՐԱՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշա- կութային ՀԿ	✉ ք.Երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27 E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info	Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Թերթը վաճառքի ենթակա չէ:	Տպագրվում է «Լիմոնշ» ՍՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրության՝ 25. 04. 2025թ.:
---	--	---	--	--